

14729

ՀԱՄԱՐԱՏՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԶՈՐԵՔՏԱՍՆԱՄՍԵԱՅ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ

ՍԵՐՈՎԲԷ ԱԶՆԱԻՈՒՐԻ

(Ի 28 Հոկտեմբեր: 1880, ց31 Դեկտեմբեր 1881)

ՄԱՏՈՒՑԵԱՆ,

ԱՌ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐ

ԵՐ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԹՈՒՐԿԻՈՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՄԵԱՆ

1882

347.9

Կ-23

ՀԱՄԱՐԱՏՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԶՈՐԵՔՏԱՍՆԱՄՍԵԱՅ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ

ՍԵՐՈՎԲԷ ԱԶՆԱԽՈՒՐԻ

(Ի 28 Հոկտեմբեր 1880, ց31 Դեկտեմբեր 1881) *

ՄԱՏՈՒՑՆԱԼ

ԱՌ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ

ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐ

ԵՒ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԹՈՒՐԿԻՈՑ



Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ստորագրեալս՝ իբր հրաժարեալ բայց առժամանակեայ պաշտօնավար մի խորհրդական Ազգային Դատական գործոց եւ անդամ Կեդր. Վարչական խորհրդոյ, խոնարհաբար կը ժողովամ, համաձայն ողւոյ եւ տրամադրութեան 77^ր յօդուածոյ Կանոնադրութեան Ազգային Ժողովոյ, Ձերդ Ազգայինամ Սրբազնութեան ինչպէս եւ համայն Հանգիտապատիւ Երեսփոխան Հարց եւ Տեսարց ուղարկութեան մատուցանել չորեքտասնամեայ պաշտօնավարութեանս համարատուութեան ներկայ տեղեկագիրն՝ ի գիտութիւն:

Արդ՝ ներուի ինձ նախ քան զամենայն աստանօր յիշել թէ՛ երբ ընդունեցայ Ազգային այդ բարձր եւ կրկին պաշտօնն՝ որ անարժանիս նուիրուեցաւ Վարչական խորհրդոյ արժանընտիր Ատենապետ Վսեմապատիւ Տիգրան Եռսուֆեան Էֆէնտիի համոզկեր առաջարկութեամբն, զկարծուի թէ՛ զայն ստանձնեցի առանց զգալու Դատական խորհրդականութեան յարակից պարտականութեանց եւ պատասխանատուութեանց յոյժ ծանրութիւնը, այլ ընդհակառակն՝ իբր սխալական մի անհատ սիրելի Ազգիս՝ իսկոյն ուղարկեցի թէ՛ կարողութեանս սահմանափակութիւնը եւ թէ՛ հանրական գործոց մէջ բաւական ձեռնհասութիւն չունեցող պաշտօնատարաց դէմ պատուարժան հասարակութեան կողմէ սովորաբար յարուցանելի քննադատութիւնները:

Այո՛, Սրբազան Հայր, այո՛, ինչպէս որ ուրիշ առիթներու մէջ եւս պատիւ ունեցած եմ յայտնել, ներկայիս ալ կը կրկնեմ թէ՛ ատոնց ամենքն ալ իւրեանց գոյնզգոյն պարագաներովն հանդերձ պատկերացան յերեւակայութիւն իմ. բայց ապաւինելով Հայրախնամ Սրբազնութեանդ, ինչպէս եւ համայն ուշիմազարդ ազգայնոցս ներողամտութեանն՝ համարձակեցայ՝ առանց երկար վարանմանց՝ ընդունիլ այդ ծանր եւ փափուկ պաշտօնն, եւ հետեւապէս Ձերդ Սրբազնութեան 1880

* Տեղեկագրիս հրատարակութեան ցարդ յապաղումն իւր կարեւոր պատճառն ունի:

73061 ան

182001

հոկտեմբեր 28 ամսաթիւ չնորհազիժ հրաւիրագրովն 'ի պաշտօն կոչուելէս անմիջապէս ետքը՝ սկսայ ձեռն 'ի գործ առնել աշխատասիրաբար։

Ուստի մէկ կողմէ ուսումնասիրելով զոգին Ազգային Մահմանադրութեան, — որով կայսերական Օգոստոսիա Տէրութիւնն բարեհաճած է օժտել 'ի վաղուց անտի իւր արդարասէր հովանաւորութեան ներքեւ հաւատարմաբար ապրող եւ բարգաւաճող Հայոց ազգը, եւ որոյ յառաջդիմական տրամադրութեանց վրայ հիմնեալ է վարչական կազմակերպութեան նոր օրէնքն, զոր Ազգային ժողովն քուէարկեց 1880 զեկտեմբեր 5ի 2րդ նիստին մէջ՝ վարչական մեքենային համաշարժութեամբ երազելու, ընթացիկ խնդրոց կանոնաւոր ուղղութիւն եւ զօրաւոր մղում մը տալու եւ վերջապէս հանրական գործոց մասին Մահմանադրական դրութենէ աւելակեալ բարեօրոշմներն իրացնելու խորհրդօք, — եւ միւս կողմէ սոյն պաշտաման յարակից պարտուցս կատարման պարագայով՝ ամեն փոյթ եւ ջանք չխնայեցի, որպէս զի արժանի ըլլամ այն մեծ պատուոյ եւ համակրութեան, զոր Ազգային Պատկառելի ժողովն՝ Ձեր Սրբազնութեան հաճոյիցն համաձայն՝ հաճեցաւ 1880 հոկտեմբեր ամսոյ վերջերն ըրած մէկ նստին մէջ գործնական փորձով ցոյց տալ՝ իւր քուէովն ինձ յանձնելով Ազգային դատական գործոց հսկողութիւնն եւ տնօրինութիւններն, զորս կարծեմ՝ այս չորեքտասնամեայ պաշտօնավարութեանս մէջ խղճի մտօք կատարած եմ 'ի գոհութիւն արդարադատ ազգայնոց. տնօրինութիւնք՝ որոնք մեծ մասամբ Ձեր ամենագէտ Սրբազնութեան զիտութեան մատուցուած են զանազան առիթներով՝ եւ զորս կսկսիմ՝ հետեւեալ ինն մասնաւոր գլուխներու գասակարգելով՝ համառօտագրել 'ի տեղեկութիւն Ազգային Երեսփոխանական Պատկառելի ժողովոյ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս եւ կարգադրութեան Դիւանին Ազգային Դատական Տեսչութեան, եւ նորա կրած անձկութեանց.

Ձեք անգիտանար, Սրբազան Հայր, թէ նուաստիս ստանձնած պաշտօնին առաջին քայլերէն մին եղաւ Դատական գործոց Տեսչութեան վերաբերեալ Դիւանն կազմել, զի՝ ինչպէս յայտնի է, առանց գործիքի գործ չկատարուիր, եւ վարչական խորհուրդն՝ իւր առաջին նիստէն 'ի վեր՝ յետ նկատ առնելոյ թէ՛ Ձերդ Սրբազնութեան եւ թէ՛ վեց խորհրդականութեանց զիւանական ձեւերու պէտք եղած պաշտօնէից թիւն, հանգամանքն եւ ձեռնհասութիւններն, ինչպէս նաեւ իւրաքանչիւրին թուալը, եւ նոցա ամսաթուական համար Ազգային երկուս-ցոյցով՝ այսինքն պիտի հասնէ առաջին հաշիւները, վարկը եւ սակս զիւանական ծախուց՝ Պատկառարանի արկեղ զրամական վիճակը, վերջապէս՝ յետ կշռադատելոյ ամենայն ինչ՝ հազիւ կրցեր էր իւր 1880 զեկտեմբեր 17ի նստին մէջ որոշում մը տալ խնդրոյն, որոյ համեմատ տնօրինութեան որ Դիւանատան պաշտօնայք իրենց կարողութեան ներածին չափ պանազան Տեսչութեանց ձեւերուն դիւանական գործոց գրադելով հանդերձ՝ 'ի սոցանէ հետեւեալք միանգամայն Տեսչութեանս զիւանական գրութիւնները եւ գործերը կարգադրեն հետեւեալ պաշտօններով. Մեծ. կարագետ էֆէնտի խաչատուրեան Դատական Տեսչութեան Ընդհանուր Քարտուղար, Պաշտպան Մանուկ էֆէնտի Օգնական Ընդհանուր Քարտուղարի, Մալլաբեան Յարութիւն էֆ. պատուարժան Ամուսնական սենեկի զիւանադար, Թուղաճեան Յովհաննէս էֆ. պատուարժան Անհատական սենեկի զիւանադար, եւ Փափազեան Թովմատ էֆ. պատուարժան վարչական սենեկի զիւանադար։

Շնորհիւ այս տնօրինութեան՝ առ ժամանակ մի կարծեցի թէ Տեսչութեանս

զիւանը բարեկարգեցաւ, իսկ շատ քեր չանցան, մէկ կողմանէ Թուղաճեան էֆէնտին ըրողովին Տնտեսական տեսչութեան զիւանին կոչուեցաւ, Պաշտպան Մալլաբեան էֆէնտին մեկնեցան Պատրիարքարանէն 1880 փետրվար ամսոյ մէջ, երբ միւս կողմանէ գործերն երթալով կը բաղմանային, գրութիւնք գրութեանց վրայ նոյնութեամբ կը դիպուէին, եւ տնօրինութիւնք տնօրինութեանց վրայ անգործադրելի կը մնային անխնամ, եւ հետեւապէս զիւանիս այդ անհանդուրժելի վիճակէն ծագելիք պատասխանատուութիւններէն ազատելու համար փութացի կանխել Դատական խորհրդականութեան հրաժեշտս, զոր մատուցի Բարձու Սրբազնութեանդ մարտի 5ին, յատուկ հրաժարագրով։

Սրբարեւ չուրանար առժամայ պաշտօնավար խորհրդականդ թէ՛ 'ի չնորհա Բարձր հրամանի եւ արդարադատ հաւանութեան Ամենապատիւ Սրբազնութեանդ, առինք զիւանական ուրիշ պաշտօնեաներ, սակայն ասոնցմէ ալ մէկը միայն չկրցաւ գոհացնել Դիւանիս կարօտութիւնները եւ միւսներն ալ թէեւ ոմն քիչ, ոմն բաւական գոհացունելով զՏեսչութիւնս՝ առժամապէս շտապան իրենց յատկացեալ թուականներով, սակայն հետզհետէ մեկնեցան Պատրիարքարանէն գանգատելով թէ՛ իւրեանց ամսաթուականներուն վճարման եղանակին մէջ անկանոնութիւն կը գործադրուի եղեր։

Չմոռնաք նաեւ յանուն արդարասիրութեան յաւելուլ թէ Տեսչութիւնս բարեբաղդ համարեցաւ եւ կը համարի ընդհանուր քարտուղար ունենալով զՄեծապատիւ խաչատուրեան Կարագետ էֆէնտի, որ փորձառու, ուշիմ եւ երկայնամիտ աշակից մ'է, բայց՝ միւս խորհրդականութեանց զիւաններուն թուրքերէն բաղմանութիւն եւ ամենափոփոխ խմբագրութեանց ծանրութեան ներքեւ չափազանց բաղմանազգ լինելով՝ լուրեայն կը նշմարցունէր՝ ինչպէս մինչեւ ցարդ շարունակ կը նշմարցունէ թէ՛ Տեսչութեանս հանապազօրեայ բաղման գործողութիւններն կատարելու համար հարկ եղած ժամանակը չունի։ Այս պատճառներով Տեսչութեանս զիւանը եւս առաւել անհանդուրժելի վիճակի մը մէջ անկանելով, 'ի մէջ յունիս ամսոյ նորոգեցի հրաժեշտս, զի անկարելի էր ինձ տոկալ այս կացութեան առանց փաստելու անձնական գործոցս։ Այսու հանդերձ դարձեալ յորդորուեցայ առժամանակեայ կերպով շարունակել պաշտօնս մինչ 'ի բարեօրոշմն զրամական վիճակի կեդրոնական արկեղ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս կազմութեան Թաղային Հաւատարմար դատարանաց.

Տեսչութեանս առաջին քայլերէն մին ալ՝ վարչական կազմակերպութեան նոր օրինաց 50րդ յօդուածին տրամադրութեան համաձայն Թաղային Հաւատարմար դատարանաց ժամ առաջ կազմութեան մասին տարած փոյթս լինելով, անյապաղ զիմեցի Ազգային Սրբազնութեանդ Բարձր հրահանգաց, զորս բարեհաճեցաւ 1880 նոյեմբեր 18 թուականակիր Պատրիարքական շրջաբերականաւ յղել Պօլսոյ շրջակայ թաղերու պատուարժան Ազգային խորհրդոց, հրամայելով իրենց Հաւատարմար դատարանաց կազմութիւնն, եւ միանգամայն ծանուցանելով նոցա թէ՛ ըստ տրամադրութեան 19, 21, 22, 23, 24 եւ 25երորդ յօդուածոց նոր օրինաց, պարտին այնուհետեւ խնդրոյն բնութեան եւ տեսակին համաձայն կատարել ամեն պաշտօնական յարաբերութիւն այն խորհրդականի հետ, որոյ Տեսչութեան կը պատկանի նոյն գործն։

Հետեւաբար՝ Տեսչութիւնս ալ՝ իւր 1880 նոյեմբեր 23 թուականաւ տարագրեալ շրջաբերականաւ յանձնարարեց նոյն պատուարժան Թաղային խորհրդոց, թէ պարտին հաստատել իւրեանց Հաւատարմար դատարանները սոյն օրինաց 26, 29 եւ 30րդ յօդուածոց տրամադրութեան եւ սկզբանց համաձայն, այսինքն՝

կազմել իւրաքանչիւր դատարան՝ թաղային խորհուրդէն դուրս բանիւրուն՝ ա-
մուսնացեալ՝ եւ թաղեցւոց վստահութիւնը չէ՛լն վայելող երկու աշխարհական
եւ մի եկեղեցական անձերէ, եւ միանգամայն՝ ի գիտութիւն իւրաքանչիւր թա-
ղային խորհրդոց ծանոյց թէ՛ այդ երեք անդամներէն գոնէ մին՝ քաղաքական եւ
ուսումնական խնդիրներու ըստ բաւականի հմուտ, եւ զանոնք պարզելու եւ լու-
ծելու համար կիրառեալ կանոնաց ըստ կարի տեղեակ անձ մը լինի. — թէ՛ մին՝
ընտրուի ատենապետ դատարանին, եւ թոշակաւոր դիւանադպիր մը ունենայ
դատարանն՝ եթէ թաղային արկեղ կացութիւնը ներէ. — թէ՛ քարտուղարութեան
պաշտօնը վարող անձին պարտքն է ճշգրութեամբ արձանագրել հարցաքննութեանց
գլխաւոր կէտերն, եւ ճշգրիտ խմբագրել դատարանին որոշումներն. — թէ՛ դատա-
բանին անդամոց միոյն հարկաւոր կը լինէր ստանձնել սոյն պաշտօնն վարելու հո-
գը՝ եթէ թաղային արկեղ վիճակը չներէր այսպիսի թոշակաւոր անձ մը ու-
նենալ, եւ կամ այդ յատկութիւններն ունեցող անձ մը չգտնուէր. — թէ՛
անձնիւր թաղային խորհուրդ պարտի սոյն շրջաբերականիս թուականէն մինչեւ
տասն եւ հինգ օր պայմանաժամու մէջ կազմել իւր դատարանն, եւ Տեսչու-
թեանս տեղեկագրել ընտրեալ դատաւորաց եւ դիւանադպիրն անուններն՝ մակա-
նունները՝ արհեստը կամ զբաղմունքը եւ բնակարանները. — նոյնպէս եթէ առ-
ձեռն դատական գործեր ունին՝ մեզ ուղարկել նոցա մի ցուցակը, համաձայն նա-
խագծին՝ որոյ մէջ մի տպագիր պատճէնները նոյն շրջաբերագրոյս ներփակեալ
յղեցի նաեւ բոլոր թաղային խորհրդոց ի տեղեկութիւն եւ ի միաձեւ գործողու-
թիւն: Իսկ նկատելով որ սոյն պայմանաժամուն մէջ՝ թաղային խորհուրդներէն
հազիւ մէկ երրորդ մասն կազմեր էին իրենց Հաշտարար դատարաններն, Չեր
Սրբազնութիւնն հաճեցաւ վերստին, Տեսչութեանս խնդրանաց վրայ, նոր շրջա-
բերականօք հրաւէր կարդալ պէտք եղած թաղային խորհրդոց անպատճառ կազ-
մելու իւրեանց դատարանները՝ ութօրեայ պայմանաժամու, յաւելլով միան-
գամայն որ եթէ դարձեալ նոյնութեամբ թափուր թողուն անկազմ՝ դատարաննե-
րը, յայնժամ Տեսչութիւնս օրինաց այդ տրամադրութիւնները անգործադրելի
չթողելու համար, ինք պիտի հարկադրուէր կատարել պէտք եղած ընտրութիւն-
ները. բայց տեսնելով որ դարձեալ անիոյթ կը գտնուէին այդ թաղային խոր-
հուրդներն, Տեսչութիւնս իւր 25 փետրուար 1881 շրջաբերականան՝ յիշեցոյց
այսպիսեաց թէ՛ Ազգային գործոց ուղղութեան մեծ արգելք կը յարուցանէին՝ այդ
անտարբերութեամբ, եւ թէ՛ հետեւաբար իրաւունք տուած կ'ըլլային Տեսչու-
թեանս՝ այդ կարեւոր գործը ի յանգ հանելու համար՝ իրենց թաղերն երթալով
կատարել տալ պէտք եղած ընտրութիւնները եւ գոնէ յակամայս վերաւորել
թաղեցւոց արժանապատուութիւնը, իւր թէ՛ Հաշտարար դատարան մը կազմելու
համար՝ չգտնուէին իրենց թաղաշրջանին մէջ երեք արժանաւոր ու ձեռնհաս ազ-
գայինք: Ուստի խնդրեցի որ հաճին փութացնել պէտք եղած ընտրութիւնները,
գործադրել օրինաց տրամադրութիւնները եւ ազատել զմեզ աւելորդ աշխատու-
թիւններէ:

Յուսամ, Սրբազան Հայր, թէ աւելորդ պիտի չհամարուի համարատուու-
թեանս այս մանրամասնութեանց հոս ներածումն, որ ըստ իմ կարծեաց՝ ոչ նուազ
կարեւոր է. որպէս զի ում որ անկ է՝ տեղեկանալով թաղային խորհուրդներէն՝
ոմանց դանդաղանաց եւ ոմանց պարտադանցութեանց պատճառներուն, հաճի այդ
դատարանաց կազմութեան դէմ յարուցուած դժուարութեանց դարման մը հայ-
թայթել:

Ահաւասիկ ցարդ իրենց Հաշտարար դատարաններն կազմող թաղերու անուն-
ներն. Բերա, Գանտիլի, Գաւրմ բաշա, Գարա կէօմիւկ, Գուզկուճուք, Գուճ
գարույի ներս, Գուճ գարույի դուրս, Եէնի գարու, Էյուպ Ս. Աստուածածին,
Թօք գարու, Իւսկիւտար Ս. Խաչ, Իւսկիւտար Ս. Կարապետ, Խապիւղ, Կէտիկ
բաշա, Դալաթիա, Մաքրի գիւղ, Պէյքօղ, Պէյլիւք տէրէ, Պէշիքթաշ, Պալատ,
Սամաթիա Ս. Գէորգ, Սամաթիա Ս. Յակոբ, Սամաթիա Ս. Յովհաննէս (Նարլը
գափու) եւ Յէրի գիւղ:

Ուսկից դիւրին է մակարեւել թէ՛ տակաւին պատասխան մը չէ հաւած Տես-

չութեանս՝ Ալէմ տաղիի, Այի Ստէֆանօյի, Գարթալի, Գնալը կղզւոյ, Եէնի քէօ-
յի, Էյուպ Ս. Եղիայի, Պոյաճը գիւղի, Ստէնեայի, Բումէլի Հիսարի եւ Օրթա
գիւղի թաղերու պատուարժան Խորհրդոց կողմէ:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Յաղագս կազմութեան Ազգային Կեդրոնական Դատարանի երից
Սենեկաց եւ նոցա ձեռնհասութեանց, եւ ինչ ինչ դիտողութիւնք.

Կը յիշէք Սրբազան Հայր, թէ նոյնժամայն ջան ի գործ դրի նաեւ կազմելու
Ազգային Կեդրոնական Դատարանի, Ամուսնական, Անհատական եւ Վարչական
երեք պատուարժան սենեակներն ըստ տրամադրութեան 51, 52, 53 եւ 54րդ յօ-
դուածոց վարչական կազմակերպութեան օրինաց:

Նախ՝ Ամուսնական Սենեկին պատկանելով բոլոր ամուսնական խնդիրներու
կամ վէճերու քննութիւններն եւ որոշումներն, նորա կազմութեան համար քա-
ռասուն տարին լրացուցած, ամուսնացեալ եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ,
ինչպէս նաեւ Կայսերական Տէրութեան օրինաց բաւական հմուտ երեք եկեղեցա-
կան եւ երկու աշխարհական ձեռնհաս անձանց պէտք տեսնուեցաւ:

Երկրորդ՝ Անհատական սենեկի պատկանելով ժառանգական, կտակային, ըն-
տանեկան, պատուոյ, փոխու հատուցման եւ այլ ամեն անհատական դատերու
վերաբերեալ քննութիւնք եւ որոշումներ, դորա կազմութեան համար ալ երեսուն
տարին լրացուցած եւ Օսմանեան բարեխնամ Տէրութեան օրինաց տեղեակ հինգ
ձեռնհաս ազգայնոց հարկն զգացուեցաւ:

Երրորդ՝ Վարչական սենեկի պատկանելով բաց ի Կեդրոնական Վարչական
Խորհրդոյ անդամոց եւ Ազգային բարձրագոյն Դատարանի Ատենից դէմ յարու-
ցեալ դատերէ՝ բոլոր Առաջնորդական, Վանական, Թաղային, եւ այլ ամեն
կարգի Ազգային պաշտօնատարաց, մանկավարժից, եւ դասատուաց պաշտօննե-
րուն եւ պարտաւորութեանց՝ ինչպէս նաեւ ընտրական իրաւանց եւ ազգային
հրատարակութեանց վերաբերեալ դատերու քննութիւնք եւ որոշումներ, սորա
կազմութեան համար ալ՝ նոյնպէս երեսուն տարեկան եւ վարչական օրինաց հմուտ
դարձեալ հինգ, ընդ ամենը 15 ձեռնհաս եւ յօժարակամ ազգայնոց անձնակա-
կան աջակցութեանց կարօտութիւնն զգացուեցաւ:

Կարօտութիւն ըսելով՝ մի գուցէ պակասութիւն հասկցուի, որովհետեւ կը
յիշեմք՝ Սրբազան Հայր թէ՛ երբ միահամուռ ձեռնարկեցինք յիշեալ դատական
Սենեկաց անդամոց ընտրութեան, բերկրութեամբ սրտի տեսանք մէկէն աւելի
ցուցակներ դատաւորութեան պաշտօնի առաջարկելի բազմաթիւ ազգայնոց, որք՝
օժտեալ լինելով վերոյգրեալ դատաւորական յատկութեամբ ու ձիրքերով՝ իրա-
ւամբ Ազգին պարծանքն եղած են. իսկ չեմք կրնար անգիտանալ թէ՛ ընտրելոց
պաշտօն չստանձնելուն պատճառաւ՝ քանիցս անգամ նորանոր առաջարկութիւն-
ներ, ընտրութիւններ եւ կոչնագրեր իտպառ ապարդիւն մնացին: Եւ թէպէտ 1880
նոյեմբեր 27ին մի տեսակէտով լրացեալ համարեցաւ պէտք եղած դատաւոր ան-
դամոց օրինաւոր թիւը, եւ դեկտեմբեր 3ին յիշեալ Դատական Սենեկաց բացման
արարողութիւնը կատարուեցաւ, այլ սակայն 1881 յունուար 31ին հազիւ կարելի
եղաւ ազգային մամուլ միջոցաւ հրատարակել նոցա օրինաւոր կազմութիւնը եւ
ծանուցանել թէ՛ դատախազը կրնան դիմել ազգային արդարութեան եւ դատ
խնդրել ընդդէմ դատախազելոց:

Կեդր. դատարանի Ամուսնական սենեակն, որ կազմեալ է Արժ. Շահպաղեան
Յովհաննէս, Սամաթիոյ Տէր Թադէոս եւ Ս. Ե. Տէր Կարապետ քահանաներէ,
Մարգարեան Յովհաննէս եւ Ժամակոչեան Պօղոս Մեծ, էֆէնտիներէ, թէեւ ընդ

ատենապետութեամբ Շահապետան Արժ. Տէր Յովհաննէս քահանայի, կը դուռնա-
րուի չորեքշաբթի օրերը, բայց ժամակոչեան էֆէնտիի հրաժեշտին պատճառաւ,
սոյն Սենեակին՝ անձնուէր եւ ազգանուէր դատաւորաց թուոյն նկատմամբ՝ ե-
րեք ամիսէ՝ ի վեր անկատար վիճակի մէջ ինկած եւ ի սոյն վիճակի մնացած է
դեռ. որովհետեւ տակաւին չյաջողեցանք նորին մեծապատուութեան տեղ սոյն
պաշտօնին ձեռնհաս եւ յօժար ուրիշ անձ մ'ընտրել:

Սենատական սենեակին կազմուած է ազգային փաստաբաններէն Մեծ. Նա-
զարէթ էֆէնտի խաչարեանէ, որ արժանապէս վարէ Սենեակին ատենապետութեան
պաշտօնը, Արժ. Տէր Սուքիաս քահանայ Ստեփաննեանէ, Ֆրէնկեան Մարութ,
Մագարուեան Համբարձում եւ Արապեան Աթանգինէ Մեծ. էֆէնտիներէ:

Իսկ վարչական սենեակին, որոյ անձնուէր անդամոց ոմանց անակնկալ հրա-
ժեշտներուն պատճառաւ կատարուած նորանոր ընտրութիւններէ յետոյ, 1881
փետրուար ամսոյն մէջ հաղիւ ամբողջացաւ, կազմուած է փաստաբան կիւրճեան
Կարապետ էֆէնտիէ, որ նոյնպէս արժանաւորութեամբ կատենապետէ այժմ սոյն
Սենեակի նիստերուն, Գեոր. Տէր Գրիգորիս Արքեպիսկոպոս Տէր Պօղոսեանէ, Տէր
Ներսէս Ծ. Վ. Արալանեանէ, Հովոսեան Ղազարոս եւ Սեթեան Միհրան Մեծ. է-
ֆէնտիներէ, բայց այս Սենեակին եւս այսօր թուով անկատար վիճակի մէջ կը գտ-
նուի Սեթեան Մեծ. Միհրան էֆէնտիի անակնունքի հրաժեշտին պատճառաւ:

Արդ՝ Դատական օրինաց տեղեակ ազգայինը կրնան հեշտիւ մակարեւել թէ՛
սոյն վաղահաս եւ նորանոր հրաժեշտներուն առթիւ Ամուսնական եւ վարչական
սենեակաց նիստերն որքան կը չեղին օրինաւոր գումարումէ՝ այնքան եւ առաւել կը
հեռանան օրինաւոր որոշումներէ, առ ի չգոյէ ձայնից օրինաւոր մեծամասնու-
թեան ի ժամու արձակման վճռոց:

Իսկ մեր Դատական սենեակաց այդ վիճակն չէ այնքան ցաւալի որքան ցաւա-
լի եւ միանգամայն չուարեցուցիչ են դատաւարութեան ընթացից մերթ ընդ
մերթ կրած կազմութիւնք՝ որք յառաջ գան մեր անձնուէր դատաւոր Հարց եւ
Տեարց անձնական ստիպողական գործոց պատճառաւ յաճախ պատահող բացակա-
յութիւններէ: Սոյն Սենեակաց ատենադրութիւններով կը հաստատուի թէ՛ սա-
կաւթիւ եւ սենեակի մը դատաւոր անդամոց ամբողջութեամբ ըրած նիստերն,
եւ թէ՛ այս նիստերէն մէկ քանին՝ դատաւորներէն օր մը ոմանց, օր միւսներուն
բացակայութեամբ տարտամ վիճակի մէջ մնացեր են, եւ ցաւ է ինձ ըսել թէ մէկ
քանին ալ ամենեւին տեղի չեն ունեցեր որոշեալ օրերն՝ ի դժգոհութիւն դատա-
վարաց:

Տեսչութիւնս յառաջ բերելով դայտսիկ, մտադիր չէ զգեանել զոք՝ իր պա-
կասաւոր ի յօժարութիւնս ազգասիրական պարտուց կատարման. Ոչ, Սրբազան
Հայր, յօժարութիւն եւ փափաք անշուշտ չեն պակսիր մեր դատաւորութեան ար-
ժանի եւ ձեռնհաս ազգանուէր Հարց եւ Տեարց, բայց միթէ ստորագրեալս եր-
բէք չեմ բացակայեր վարչական խորհրդոյն գումարումներէն, միթէ պատուար-
ժան պաշտօնակիցներէս մերթ միոյն եւ մերթ միւսոյն բնաւ բացակայութիւն պա-
տահած չէ՞, եւ միթէ Երեսփոխանական ժողովոյն Պատուարժան անդամներէն եր-
բէք բացակայողներ գտնուած չեն՝ նորա ամիսը մէկ կամ երկու անգամ ըրած
կարճատեւ նիստերէն :

Իրաց այս վիճակին մէջ՝ եթէ ոք հարցնէ թէ է՞ր ուրեմն չենք փոխեր դա-
տաւորներն, այս է տալիք պատասխանս — ո՛չ թէ կարող, ձեռնհաս եւ դատա-
ւորութեան պաշտօնն ըստ ամենայնի գոհացուցիչ կերպիւ վարելու արժանաւոր
անձինք չունինք, կը ինչպէս ի վեր անգը ըսինք՝ բազմաթիւ ունիմք, այլ միայն
դժուարութիւն կը կրենք զայն համոզելու որ անձնուիրաբար ստանձնած պաշ-
տօնին արդիւնաւորելու համար համար հաճին ազգասիրաբար գումարմանց ժամապահու-
թիւնն յարգել դոյզն գոհողութեամբ:

Տեսչութիւնս ազգային Դատական սենեակաց այս տխուր վիճակին դէմ դատա-
խազից եւ դատախազելոց կողմէ յաճախ յարուցուած գանդատներն ի նկատ
առնելէ ետեւ, փութաց պատկառելի վարչական խորհրդոյ խորին ուշադրութեան
մատուցանել զայնս հանդերձ իրենց հետեւանօք, դիտել տալով միանգամայն թէ

անհրաժեշտ է մէն մի Սենեակի հինգ դատաւոր անդամոց ձայնից օրինաւոր մե-
ծամասնութիւնն՝ յօրինաւորութիւն քննութեանց եւ որոշմանց, եւ հետեւապէս
թուշակաւոր դատաւորներն ունենալու կարեւոր դրութիւնն առաջարկեց:

Իսկ վարչական խորհուրդն յետ կշռադատելոյ առաջարկիս օրինաւորութիւնն
ու կարեւորութիւնը իւր ամեն պարագաներով, ինչպէս նաեւ վարչական ծա-
խուց ու պիտոյից համար ելմտացոյցին մէջ սահմանեալ գումարին արդի անբաւա-
կանութիւնը, ստիպուեցաւ որոշել այսպէս. «Երբ դատական ձեռնհաս Սենեակի
«մը հինգ դատաւոր անդամներէն միայն երեքին ներկայութեամբ քննուի խնդիր
«մը, սոյն երեքին միաձայն հաւանութեամբն նոյն խնդրոյ նկատմամբ արձակուած
«վճիռն կամ տրուած որոշումն օրինաւոր համարուի եւ ֆորմալէն լինի ֆոլէ- ջնոր
«Կարգադրութիւն. բայց միշտ եւ հանապազ վերապահելով դատախազից իրաւունքը
«ի վերահսկման կամ ի վերաբերման, համաձայն օրինաց:»

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս կազմութեան Ազգային բարձրագոյն դատաւանի
Քաղաքային ասենի, եւ նորա ներկայ թափուր վիճակին.

Ինչպէս յայտնի է քաջարթութեան Սրբազնութեանդ, Ազգային բարձրագոյն դա-
տաւանն երկու ճիւղի՝ այսինքն Կրօնային եւ Քաղաքային ատենաներու բաժնուած
լինելով ըստ Յճրդ յօդուածոյ վարչական կազմակերպութեան նոր օրինաց, կը-
րօնային ատենան արդէն կազմուած է Գերապատիւ Տէր Կարապետ Ս. Եպիս-
կոպոս Սերովբեանէ, Թաթարեան Տէր Գարեգին եւ Փափաղեան Աշոտ Ծ. Վար-
դապետներէ, Հիւնքեարայէյետեան Տէր Յովհաննէս եւ Սարգսեան Տէր Սահակ
Արժ. Աւագ քահանաներէ, եւ իւր օրինաւոր գումարումներն իսկ ընելու վրայ է:

Գալով Քաղաքային Ատենի վիճակին՝ յոյժ ցաւալի է յիշեցնել թէ՛ Ազգային
նորակազմ վարչութեան օրէն ի վեր այս Ատենին ընտրեալ հինգ խորհրդական
էֆէնտիներէն միայն վսեմաշուք խորասանձեան թովմաս եւ Մեծ. Պապոյեան
Պապօ էֆէնտիներն ստանձնած, իսկ միւս երեք Մեծ. էֆէնտիներն՝ իւր-
եանց անձնական զբաղմանց առթիւ՝ մերժած լինելով իրենց նուիրեալ այս մեծ
եւ կարեւոր ազգային պաշտօնն, Տեսչութիւնս չզղացաւ գործել ինչ որ հարկ էր
մեր բարձրագոյն դատարանին այս ամենահարկաւոր ճիւղը թափուր վիճակի մէջ
չթողլոյ համար, բայց երկոտասան ամիսէ ի վեր այս մասին ըրած ճիշդեւ գըժ-
բաղդաբար ապարդիւն մնացին, որովհետեւ ինչպէս որ Ձեր Սրբազնութիւնն դի-
տէ՝ ընտրական գործոց մասին ըլլալիք առաջարկութիւնք Տեսչութեան ձեռն-
հասութեան վեր, եւ ընտրութիւնք վարչական խորհրդոյ պաշտօնէն դուրս գըտ-
նուելով, չէի կրնար առաւել ստիպանօք ժտել վարչական խորհուրդէն Ազգային
այս կարեւոր Ատենին անմիջական ամբողջացումը: Չմոռնանք յիշել որ թէ եւ Ազ-
գային Ընդհանուր ժողովն 1881 սեպտեմբեր 10ի նստին մէջ ուր ուրեմն ընտրեց
Ներսէսեան Գրիգոր, Ունձեան Աբիկ, եւ Ղազարոսեան Սահակ Մեծ. էֆէնտի-
ներն եւ Ձեր Սրբազնութիւնն փութաց ի պաշտօն հրաւիրել զայնս, սակայն ցաւ
է ինձ ըսել թէ ի սոցանէ եւ ոչ մին ընդունեց այս ընտրութիւնն, եւ Քաղաքային
ատենան ինչպէս կերկնչէի, դարձեալ մնաց անօգնական ու կը մնայ մինչեւ ցարդ
թափուր ի վնաս գործոց եւ իրաւանց վճառքներով իսկ պահանջող ազգայնոց՝ որոց
գանդատանաց ձայներն օր ըստ օրէ բարձրանալով անլուրի չեն կրնար մնալ
անշուշտ :

Յաղագս ծրագրոյ դասական ծախուց եւ Դիւանական հասոյթից
Ազգային Պատրիարքարանի.

Ազգային Դատավարական ծախուց եւ Դիւանական գրութեանց համար Պատրիարքարանի արկեղ վճարելի գումարներու մասին թէեւ կանոնադիր մը կար պատրաստ, սակայն շատ թերի լինելուն, միւս ձեռնարկութեանց հետ՝ փութացի նաեւ ծրագրել մի կանոնագրութիւն դատական ծախուց եւ դիւանական հասոյթից համար, զոր 1880 յունվար 9 ամսաթիւ գրով մը ներկայեցի Տնտեսական գործոց Մեծապատիւ Խորհրդական Էֆէնտիի ուշադրութեան՝ խնդրելով որ շնորհ ընէ քննել եւ իւր դիտողութեամբն հանդերձ առ իս վերադարձնել:

Ի պատասխանի գրոյս՝ սոյն ծրագրին անդամները մեզ հաղորդուած ըլլալով՝ պատշաճ դատեցի անգամ մ'ալ Ազգային Պատրիարքարանի Դիւանատան փորձառու անդամներէն եւ Պատրիարքական արժանիւթի փոխանորդ Ռուսնուքեան Գերաշնորհ Տ. Գէորգ Ծ. Վ. Ս. Հօր նախագահութեան ներքեւ կազմեալ Յանձնախմբին դիտողութեան ենթարկել զայն, այլ այս Յանձնախմբին նիստերն եւս յայնժամ պատճառաւ իւրիւր առժամապէս ընդհատուած լինելուն՝ նոյնութեամբ ետ առի ծրագրիս, զոր ուր ուրեմն առժամայն գործադրութեան առաջարկութեամբ 1881 մայիս 24ին մատուցի վարչական պատկառելի Խորհրդոյն՝ ի քննութիւն եւ ի պատշաճ տնօրինութիւն:

Պէտք է յիշել թէ՛ այս ծրագրոյն սահմանած դատական ծախուց եւ դիւանական հասոյթից գումարներու քանակութիւնը՝ բոլորովին համեմատեալ են կայսերական դատարանաց եւ դիւանաց վճարելի օրինաւոր դատական տրոց եւ հասոյթից, բաց ի մէկ քանինքէն, որոնք համեմատաբար քիչ մը բարձր այլ ի հնուց անտի Պատրիարքարանի մէջ կիրառութեամբ սովորութեան եւ օրինաց կարգն անցած լինելով՝ Տեսչութիւնս 1881 մայիս 12 ամսաթիւ իւր մէկ ծանուցագրովն հրահանգ տուաւ Ազգ. կեդրոնական Դատարանի երեք Պատուարժան Սենեկաց եւ իւր Դիւանին, որ գործադրելով զայն՝ կրնան զերծ մնալ մէն մի պարագայի մէջ պահանջելի ծախուց քանակութեան առթիւ ծագելիք տարակոյտէն:

Աւելորդ չթուիր ինձ, Սրբազան Հայր, յիշել նաեւ աստ թէ՛ ներկայ վարչութեան առաջին տարեշրջանին մէջ ի Պատրիարքարան հասած դատական գործոց թիւն՝ մինչ ցվերջ դեկտեմբեր 1881, ընդ ամենը 522 ի կը յանգի, որոց վրայ կարեւոր դատուած տեղեկութիւնք գծուած են տեղեկագրոյս 2¹ գլխոյն մէջ:

Այս խնդիրներէն վերջացածներուն վճառագրոց, ինչպէս եւ յարաբերութեան ենթարկեալ խնդրոց համար սահմանուած դիւանական հասոյթներէ՝ մինչ ցվերջ դեկտեմբերի գոյացած գումարն 8850 դահեկանի հասած լինելով, սոյն գումարին 5614 զուրուշն արդէն գանձուած եւ Պատրիարքարանի կեդր. անտուկին յանձնուած է, իսկ մնացորդ 5216 դահեկանն ալ ի մօտոյ կրնայ մտանել ի նոյն արկեղ, ուսկից դիւրին է մակարերել թէ հասոյթից համագումարն համեմատաբար կրնայ մեծնալ՝ երբ առձեռն գործոց փութալններու փութացուցմամբն կեդրոնական Դատարանի երկից Սենեկաց գործառնութիւնք առաւել կանոնաւորին եւ բարւոքին:

Տեսչութիւնս փափաքեցաւ միայնգամայն որ թաղային Հաշտարար Դատարանը ալ ըստ այսմ ծրագրի սահմանեն իրենց իրաւունքներն ի նպաստ դատարանաց ծախուց, հարկերն վաճառել իւր սեպհականութիւն Պատրիարքարանի կեդր. սրնտուկին յանձնելու պայմանաւ, եւ սակայն այս նկատմամբ եւս որոշում մը տեղի չունեցաւ ցարդ:

Ընդհանուր վիճակ Ազգային դասական գործոց.

Տեսչութեանս պաշտօնավարութեան մէջ թէ՛ Բարձրաշնորհ Սրբազնութեանդ հրամանաւ յղեալ, թէ՛ իւր Գեր. Փոխանորդ Ս. Հօր տնօրինութեամբ յանձնեալ եւ թէ՛ ուղղակի մատուցեալ զանազան խնդրագրերն՝ ինչպէս քիչ մ'առաջ յիշեցինք, ընդ ամենն 522 խնդրոց կամ վէճի վերաբերելով, ասոնցմէ 52ը՝ նախորդ վարչութեանէն կտակեալ եւ 270ը՝ ներկայ վարչութեան օրով յարուցեալ նոր խնդիրներ են, որոց 145ը արանց, եւ 177 կանանց կողմէ մատուցուած եւ Ազգային դատարարութեան ենթարկեալ գործեր են:

Սոյն 522 գործոց վերաբերեալ աղերսագրերն եւ սոցա յարակից բողոքագրերն ու տեղեկագրերն, ինչպէս եւ այլ ամեն տեսակ հին եւ նոր թղթերն մի առ մի ձեռք առնելով՝ զայնս ուշի ուշով աչքէ անցընելէ եւ կարեւոր տեղեկութիւններն Տեսչութեանս Ընդհանուր Քարտուղար Էֆէնտիի միջոցաւ ստանալէ յետոյ՝ մեծագոյն մասին իմաստն իմ ձեռքով համառօտագրեր եմ իւրաքանչիւրին վրայ, եւ մէն մի գործին բնութեան համեմատ պատշաճ դատուած տնօրինութիւններն առնոց վրայ ձեռագրովս դրոշմելով՝ աջակից չունենալուս պատճառաւ եւ գործոց ընթացից արդելք եւ թիւրխացութեանց տեղի չտալու համար՝ բնակարանս պահուած մասնաւոր տետրի մը մէջ այս ամենն կարգահամարաւ նշանակած եմ առ ի յիշողութիւն:

Կարելի է որ սիրելի ընթերցողներէս ոմանք աւելորդ դատեն այս մանրամասնութեանց յիշատակութիւնը, իսկ նուաաստիս պատշաճ եւ կարեւոր թուեցաւ, ոչ թէ իմ տարածած հրաժարմանս առիթ եղող դիւանական այս վիճակն եւ իմ վերայ ծանրացած աշխատութիւններն յառաջ բերելու, այլ այս աշխատութեանցս համառութիւնովն կանխեալ հրաժարականս արդարացնելով հանդերձ՝ Դիւանական պիտոյից կարօտութեան աստիճանին նկատմամբ որոշ եւ բացայայտ գաղափար մը տուած ըլլալու համար:

Այս միջանկեալ դիտողութեանս յետոյ կանցնիմ համառօտագրել թէ սոյն 522 դատական գործերէն 12ը վերջացած եւ մնացորդ 510էն
25ը արանց եւ 21ը կանանց կողմէ յարուցեալ՝ 46 գործ Հաշտարար դատարանաց,
18ը » » 36ը » » » 54 » Ամուսնական Սենեկի,
15ը » » 10ը » » » 25 » Անհատական Սենեկի,
9ը » » 1ը կնոջ մը » » 10 » Վարչական Սենեկի
յղուելին տնօրինած եմը:

Նոյնպէս 12 արանց եւ 28 կանանց կողմէ մատուցեալ ընդ ամենը 40 խնդիր յարաբերական գործողութեանց մէջ լինելով՝ վերջնական պատասխաններու կսպասուի: Իսկ 61 արանց եւ 76 կանանց կողմէ յարուցեալ ընդամենն 157 խնդիրք ի տոկ ձգուած են ի դիւան Տեսչութեանս, մինչեւ աղերսամատոյցք ներկայանան եւ պէտք եղած տարազներն լրացնելով՝ վճարեն հասոյթից կանխիկները. ուսկից կը տեսնուի թէ 158 արանց եւ 172 կանանց կողմէ մատուցեալ ընդամենն 510 գործք կան:

Արդ՝ իրաց այս բերումն բնական է նախատեսել թէ դատական գործերն այսպէս օր ըստ օրէ, ժամէ ի ժամ ենթարկուելով դատավարական եւ յարաբերական գործողութեանց ելից՝ կարելի չէ միշտ մի եւ նոյն դատակարգութեան եւ անփոփոխ վիճակի մէջ պահել զայնս. եւ այս տնօրինութեանց պատճառաւ Հաշտարար դատարանաց յղելի 46 գործերէն հազիւ քանի մը խնդիրներ կրնան հաշտութեամբ վերջանալ, եւ մնացորդք Տեսչութեանս ետ դառնալով՝ ձեռնհաս Սենեկաներու պիտի փոխադրուին:

Ամուսնական Սենեկի յղելի 54 գործերէն՝ 45ը, Անհատականին քննութեան ենթարկելի 25 խնդիրներէն՝ 19ը, եւ վարչական սենեկի նկատառման ներկայանալի 10 գործոց 9ը միայն, այն է 73 գործ ննութեան ներքեւ լինելով, մնացորդ 9

ամուսնական, 4 անհատական եւ 1 վարչական դատեր առկախ կապասեն 'ի Ղիւան Տեսչութեան, մինչեւ աղերսամատոյցք անձամբ ներկայանալով կատարեն սահմանաւ գործողութիւնները:

Այս Սենեկաց յղեալ սոյն 75 գործերէն՝ արդէն 14 ամուսնական 7 անհատական եւ 2 վարչական խնդիրներ քննուած ու վճռուած լինելով, 50 խնդիր տակաւին քննելի են, եւ արձակեալ վճիռներէն ոմանց դէմ վերաքննութիւն պահանջուած լինելով՝ միւս վճռագրերն թուրքերէն իւրի՞նք ձեռով հետզհետէ կը մատուցուին կայսերական գործադիր իշխանութեան 'ի գործադրութիւն: Այլ ցաւօք սըրտի կը յեղեցնեմ թէ՛ Բաղաքային Ատեանն երկոտասան ամսէ 'ի վեր տարտամ գիրք մ'ստացած լինելուն, մի քանի վճռագրոց քննութիւնք եւ վերջնական տնօրինութիւնք անհանդուրժելի վիճակի մէջ կը գտնուին 'ի դժգոհութիւն եւ 'ի վնաս իրաւանց եւ շահու դատախազից, միանգամայն 'ի տարապայման շուարունմն Դատական Տեսչութեան:

Գալով յարաբերութեան մէջ գտնուած 40 խնդրոց եւ 'ի դիւանս սպասող 157 գործոց, պարտ կը համարիմ առ այն հետեւեալ տեղեկութիւններն տալ համառօտակի, որոց վրայ կարծէ որ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ուշադրութիւնն հրաւիրեմք:

Նախ՝ յիշեմ հանգուցեալ Պարոն Ստեփան Գուրտեանի ժառանգութենէ բաժին պահանջող քանի մը ժառանգորդաց կողմանէ փոխանորդող Մեծ. Պարոն Մկրտիչ Քիլարեանին, հանգուցելոյն եղբոր Մեծ. Պարոն Կարապետին դէմ 1875ին բացած դատը, որ կայսերական դատարանէն Ազգային Պատրիարքարանին յանձնեալ լինելով, իրաւախոհ Սրբազնութեանդ բարձր հրամանաւ կազմեալ յանձնաժողովոյ մը յղուած էր առ 'ի քննութիւն եւ տեղեկագրութիւն: Յիշեալ փոխանորդին յարուցած գանգատանաց վրայ՝ գործը Տեսչութեանս հսկողութեան յանձնուեցաւ անաչառ Սրբազնութեանդ Հայրախնամ տնօրինութեամբ: 1881 յունիս 18ին եւ Յանձնաժողովն ըստ իմ խնդրանաց հաճեցաւ Տեսչութեանս փոխադրել խնդրոյն վերաբերեալ թղթերն ու գրութիւններն եւ տեղեկագրել իւր աշխատութեանց արդիւնքը. ուսկից կիմացուի թէ՛ հանգուցելոյն եւ իւր եղբոր Պարոն Կարապետին միջեւ առեւտրական ընկերութիւն մը կայ եղեր, թէ՛ հանգուցելոյն բոլոր շարժական եւ անշարժ ինչքերն ընդ իշխողութեամբ Պարոն Կարապետ Գուրտեանի կը գտնուին 'ի գրկանս ժառանգորդաց եւ նա ոչ համար կուտայ եւ ոչ հաշուետուար կը ներկայացնէ եղեր Յանձնախմբին, պնդելով թէ՛ հանգուցելոյն եւ իւր միջեւ գոյացեալ պայմանագրութեամբ՝ ինքն է տէր ամենայն գոյից եւ կալուածոց եւ ազատ՝ համարատուութենէ, եւ թէ՛ սեպհականութիւնք իսկ արդէն զետեղեալ են կտակագրոյ մը համեմատ:

Վերջապէս Պատուարժան յանձնախումբն ո՛ր եւ իցէ պատճառաւ չլրնալով ձեռք բերել թէ՛ յիշեալ պայմանագրութիւնը եւ թէ՛ նոյն կտակագիրը, անկարող եղած էր վերջնական եզրակացութեան մը յանգիլ:

Ուստի՝ Տեսչութիւնս զիմելով անաչառ Սրբազնութեանդ՝ յաջողեցաւ տեսնել այդ երկու գրութիւնները, 'ի շնորհս Ձերդ Բարձր եւ ազգու հրամանին, եւ հետեւեալքար իմաստասիրելով գործը՝ կարողացաւ տեղեկագրել Ազգայինամ Սըրհետեւութեան ինքնապատկանութիւնը գործը՝ կարողացաւ տեղեկագրել Ազգայինամ Սըրհետեւութեանը՝ եզրակացնելով թէ՛ այդ երկու գրութիւնք օրինաց անհամաձայն եւ ներկայ խնդրոյն մէջ ոչ միայն անգործադրելի կը թուին Տեսչութեանս, այլ նաեւ վնասակար նոյն իսկ բոլոր ժառանգորդաց շահուց, թէ՛ նոյն Յանձնաժողովոյ ըրած հետազոտութիւններէն հետեւող եզրակացութեանց նկատմամբ փապարեան Պարոն Մկրտիչին ներկայացուցած ժառանգորդք ունին իրաւունք մը, որոյ վրայ յաւելցնելով կալուածոց բաժինը հանդերձ եկամուտներով եւ դատական ծախսեր, բաւական մեծ գումարի մը կը յանգի Պարոն Կարապետէն պահանջելի դրամն, եւ սակայն լաւ էր հաշուութեամբ վերջացնել խնդիրն եւ ազատել դատախազաց երկու կողմն ալ սպասակար գատերէն, քան տեղի տալ յարուցանելու այնպիսի խնդիրներ որոնք ոչ Պարոն Կարապետին եւ ոչ նորա համախոհներուն կրնային պատիւ բերել:

Վարչական Պատկառելի Խորհուրդն տեղեկագրոյս այս եզրակացութիւնն 'ի նը-

կատ առնելէ յետոյ՝ Տեսչութեանս յանձնած լինելով առաջադրեալ հաշուութիւնն գոյացնելու հոգը եւ նուաստս ալ կը աղաթելով խնդրոյն փափկութիւնը եւ ինձ բողոքովին անձանօթ եղող Գուրտեան Մեծ. Պ. Կարապետն համոզելու դժուարութիւնն, նախադասեցի իւսկիւտարու Ս. Կարապետ Եկեղեցւոյ թաղային Խորհրդոյ եւ Հաշտարար դատարանին յանձնել գործը, հրահանգելով որ հաւաքական համագործութեամբ երկու կողմն ալ թախանձեն եթէ հնար է՝ խնդիրն հաշուութեամբ վերջացնելու եւ յոգնութիւն ու վնաս սպառնացող երկարատեւ դատերու տեղի չը տրուելու համար. բայց ցաւալի հարկ մ'է ինձ յաւելու թէ՛ ոչ միայն Գուրտեան Պ. Կարապետ չէ համոզուեր . . . այլ եւ այն կալուածական ցուցակն ալ՝ զոր կը յուսայինք տեսնել, չը հասաւ մեզ . . . եւ հետեւապէս պէտք եղաւ գործն իւր նոյն վիճակին մէջ ենթարկել Պատ. Անհատական Սենեկի քննութեան եւ որոշման:

Երկրորդ՝ հին գործերէն մին ալ Պապեան Մեծ. Թազուր Էֆէնտիի եւ նորա 'ի Պրուսա գտնուող կողակցին միջեւ 1866էն 'ի վեր անորոշ եւ առկա մնացած խնդիրն է, որ իրաւարար Սրբազնութեանդ տնօրինութեամբ Տեսչութեանս հսկողութեան յղուեցաւ: Սոյն խնդրոյն վերաբերեալ կրօնական դիւանին մէջ գտնուած գրութիւններն ձեռք առնելով Տեսչութիւնս եւ իմաստասիրելով դայնս, պատիւ ունեցաւ տեղեկագրել Արդարադատ Սրբազնութեանդ թէ՛ Թազուր Էֆէնտիի անկ էր վստահութեան արժանի բժշկական վկայագրով մը հաստատել իւր ամուսնոյն՝ Պրուսայէն 'ի Պօլս ուղեւորելու կարող կամ անկարող վիճակի մէջ լինելն, որպէս զի ըստ այնմ կարելի ըլլայ տնօրինել դարձանն. բայց Թազուր Էֆէնտի՝ որում հաղորդեցաւ այս տնօրինութիւնն, անփայթ կը մնայ ցարդ:

Երրորդ՝ կարեւորութիւն ստացած հին դատերէն մէկն ալ Յրէնկեան Մեծ. Յակոբ Էֆէնտիի կեսարիոյ վանքէն պահանջ ըրած 1500 եւ 4500 ընդ ամենը 6000 դահեկանի եւ 1852 փետրվար 10էր 'ի վեր զիջեալ եւ զիջելի տոկոսեաց խնդիրն է, որ նախորդ Վարչութեան օրով՝ Ազգային Դատարանին առջեւ՝ ամբաստանեալ կողման օրինաւոր փոխանորդին բացակայութեամբ քննուելէ ետեւ՝ Բաղաքական Ժողովոյն 1877 մայիս 27ին արձակած վճռովն 46850 դահեկանի վերածուելով՝ Յրէնկեան Էֆէնտիի պահանջքն հաստատուեր էր: Եւ թէպէտ այս որոշման վրայ հրաւէր գրուած է առ 'ի գործադրութիւն, սակայն սոյն վճիռն ոչ գործադրուեր եւ ոչ ընդունուեր է, այլ ընդդիմութեան մէջ 'ի տոկ ձգուեր է:

Տեսչութիւնս յետ իմաստասիրելոյ խնդրոյն օրինական վիճակը եւ վճռագրոյն անգործադրելի մնալն, եւ նկատելով որ միայն 1500 զրդ. ի պարտամուրհակն Յակոբ Էֆ. իսկ 4500ի պարտամուրհակն հանգուցեալ Յրէնկեան Պ. Յարութիւնի անուան կը գտնուին՝ նորոգ քննութեան կարօտութիւն տեսաւ, եւ տնօրինեց որ կամ կեսարիոյ վանքը կողմանէ օրինաւոր փոխանորդ մը յուղարկուի եւ կամ աստ կարգուի որոշեալ պայմանաժամու մը մէջ, որպէս զի Ազգ. Կեդր. Դատարանի ձեռնհաս Սենեկին ներկայանալով՝ քննութեան առնուի խնդիրն եւ վերջնապէս կարգադրուի:

Սակայն այս միջոցին՝ հանգուցեալ Պ. Յարութիւն Յրէնկեանի ժառանգորդաց կողմանէ՝ նորա որդին Յրէնկեան Սարիմ Էֆ. փոխանորդագրով մ'ի Պատրիարքարան ներկայանալով կը պահանջէ այժմ որ վերոյիշեալ 4500 դահեկանի խնդիրն զատուելով Յակոբ Էֆ. ի արդէն ըրած պահանջքէն, յատկացուի իբրեւ հայրենական ժառանգութիւն իւր եւ իւր համաժառանգորդ. եղբարց:

Եւ ըստ որում խնդիրն արդէն Անհատական Պատ. Սենեկի յղուած էր, այսպէս առաջին խնդիրն փոխուելով յիշեալ Սարիմ Էֆ. ի նոր միջարեւած խնդիրն ալ նոյն Սենեկի յանձնուեցաւ առնել դարձանն ըստ օրինի:

Չորրորդ՝ հին գործ մ'ալ վանայ Այր յարոյց Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Երուսէի խանի սենեկապետ Պ. Ներսէսի միջեւ՝ սոյն խանի 12 թիւ եւ յիշեալ Եկեղեցւոյ սեպհականեալ է ըսուած սենեկին նկատմամբ ծագած վէճն է, զոր թէ՛ նախորդ եւ թէ՛ ներկայ Վարչութեան օրով Տնտեսական գործոց Մեծ. Խորհրդական Էֆէնտիին քննելէ եւ սերտելէ յետոյ, Տեսչութեանս հաղորդուած տեղեկագրովն Կեդրակացնէ եւ կը հաստատուի թէ՛ յիշեալ սենեկապետին իրաւունքն ու շահն անխղճարար առաթուր եղած էին: Հետեւաբար Տեսչութիւնս սոյն տեղեկագրոյն մի վաւերական պատճէնն յիշեալ Հոգաբարձութեան հաղորդել տալէ յետոյ՝ ըստ

օրինի վերադննութիւն պահանջող դիտողագիր մը երեւան չենելուն՝ վարչական խորհրդոյ որոշմամբ Տնտես. Տեսչութեան փոխադրեցաւ նոյն տեղեկագիրն առ ՚ի գործադրութիւն համաձայն եզրակացութեան:

Հինգերորդ խնդիր մ'ալ Տէր Ներսէսեան Յարութիւն անուն անձին ընդդէմ Արմաշու վանից Աբբաշայր Աշրգեան Գեր. Տ. խորհն Եպիսկոպոսի յարուցած բողոքն է, որով կառարկէ թէ իրեն սեպական երկիրներն՝ յիշեալ Սրբազան՝ վանքին սեպականութիւնն համարելով իւրացուցեր է: Տեսչութիւնս տեսնելով որ բողոքարկու Յարութիւնի ձեռքը գտնուած զանազան կալուածագրերէ գտնուած ինքնի նկարագրած երկիրներն սահմանող յատակագիր մը չգտնուիր, տնօրինեց որ նախ քան զամենայն այդպիսի կանոնաւոր յատակագիր մը ներկայէ հանդերձ պատճառարանեալ օրինաւոր տեղեկագրով մը, որպէս զի իւր բողոքն կարենայ լսելի լինիլ առաջի ձեռնհաս Ազգային Դատարանի:

Վեցերորդ՝ հին գործ մ'ալ Ս. Երուսաղիմայ Պատ. Միաբանութենէ ուժացեալ Արթ. Ատուրեան Աթանաս վարդապետին՝ մեր Կաթողիկ ազգայնոց Պատրիարքարանին յարելով Ս. Երուսաղիմայ վանքէն ինչ ինչ կալուածոց մասին ըրած պահանջն է, որով առարկելով թէ ինքն Եաֆա գտնուած պահանջն ստացեր եւ միաբանութիւնն աւանդաբար վանքին սեպականած է զայնս, իրաւունք եւ արդարութիւն կը պահանջէ:

Եւ որովհետեւ 1877ին երբ ՚ի Պատրիարքարանն մեր Հակոբէ վերսիւրիւսեան Կաթողիկ ազգայնոց՝ վարչական խորհրդոյ Ատենապետութեան պաշտօնն կը վարէին անարժանաբար, եւ Ձեր անաչառ Սրբազնութիւնն՝ ում գիմեցի յայնժամ ՚ի դիմաց յիշեալ Պատկառելի խորհրդոյ, առաջարկելով որ երկու Պատրիարքարանաց պատկանող համագրայնոց միջեւ ծագած խնդիրներն ու վէճերն երկուցունց մէջ իրաւախօսութեամբ քննուին, լուծուին եւ վերջանան՝ ենթարկուելով որոշման ամբաստանեալ կողման Դատարանին, այլ սա պայմանաւ որ ամբաստանողն ընդունի ամբաստանելոյն Պատրիարքարանի դատաւարութեան դրութիւնն, եւ ամբաստանողին Պատրիարքարանէն դատաւոր մը՝ ամբաստանելոյն Պատրիարքարանին դատարանն զրկուելով ներկայ գտնուելի ՚ի ժամու քննութեանց եւ որոշման, առանց սակայն միջամտելու գործողութեանց:

Որովհետեւ Ձեր Բաջիմաց Սրբազնութիւնն յայնժամ այս միջազգային առաջարկն ընդունելով՝ Ազգային Ժողովոյ հաւանութեամբ սկսած էր ՚ի գործ դնել եւ յայնժամ պահու յիշեալ Պատրիարքարանէն Ազգ. Պատրիարքարանի Դատարանին յանձնուած էր ամուսնական վէճ մը՝ որ հաշտութեամբ վերջ գտած էր ՚ի գոհութիւն երկուց կողմանց:

Եւ որովհետեւ ներկայ 1881 տարւոյ յունվար ամսոյ մէջ՝ Դաւիթ Ստեփանեան անուն աղքատ ազգային Կաթողիկ համագրային մ'ըրած 4180 դահեկանի պահանջին համար՝ Ձեր Սրբազնութեան հաւանութեամբ՝ երբ դիմեցի առ Ամեն. Ս. Պատրիարքն՝ որ այդ միջոցին տեղապահութեան պաշտօն կը վարէր, եւ վերոյիշեալ միջազգային պայմանագրութիւնն Նորին Սրբազնութեան հաղորդելով առաջարկեցի ըստ այնմ գործել այս պարագային մէջ, Նորին Սրբազնութիւնն առանց մտաւոր գոհունակութեամբ ընդունեց զայն եւ յարեց միանգամայն թէ այդ դրութիւնն յոյժ համաձայն է իւր գաղափարին, եւ թէ ինքն արդէն ասկէ քսան տարի առաջ՝ բարեյիշատակ Բարուսակ Պէյի վարչութեան օրով ըրած էր այս առաջարկն. այս առիթներով նորոգուած լինելով յիշեալ միջազգային դրութիւնն, Դաւիթ Ստեփանեանի գործն յանձնուեցաւ Կաթողիկ Հայոց Պատրիարքարանի Պատ. Դատարանին, ուր խիստ գոհացուցիչ եղանակաւ մը կարգադրեցաւ գործն եւ մինչեւ իսկ կանխավճար մ'ալ եղաւ Դաւիթի ՚ի հաշիւ իւր պահանջին, որպէս զի կարենայ Շէյխ-Իւլ-Իսլամի դուռն կատարել ինչ ինչ տարազներ, առանց որոց չէր կարող զանձել իւր պահանջած գումարն:

Արդ՝ սոյն միջազգային պայմանագրութեան համաձայն վարուելով՝ Տեսչութիւնս հաճութեամբ Բարձու Սրբազնութեանդ՝ ընդունեց Աթանաս վարդապետի 1881 սեպտեմբեր 9 ամսաթիւ խնդրագիրն, ոյր մի պատճէնն Ս. Երուսաղիմայ Պ. փոխանորդ Գեր. Ս. Հօր հաղորդել տալով օրինաւոր պայմանաժամաւ պատասխանն խնդրեց:

Այլ Նորին Սրբազնութիւնն ՚ի պատասխանի ծանոյց թէ, սոյն խնդիրն յառաջ քան ուժման Աթանաս վարդապետի յուզուած էր յերուսաղէմ եւ անդ վերջացած՝ միջամտութեամբ Օսմ. Կայսերական կառավարութեան եւ Գաղղիական Տիւրքաւորանին: Այս միջադէպին պատճառաւ Տեսչութիւնս եզրակացուց թէ Արթ. Աթանաս վարդապետն պարտի ըստ օրինի՝ դիմել ուղղակի Ազգային արդարութեան եւ ոչ միջամտութեան քոյր կամ դուստր Պատրիարքարանի: Միանգամայն վարչական Պատկառելի խորհրդոյ նկատառման եւ որոշման ներկայեցի այդ եզրակացութիւնս կամ տեսակէտս՝ որ միջազգային օրինաց համաձայն դատուեցաւ:

Արթ. Աթանաս վարդապետ՝ ում բերանացի հաղորդեցի այս տնօրինութիւնն, հաճութիւն ցուցուց՝ խնդրանքը սակայն որ անցապաղ վերջ տրուի գործին: Իրաց այս վիճակին մէջ պատշաճ թուեցաւ ինձ նախ ենթարկել խնդիրն մասնախմբի մը քննութեան եւ որոշման, որու անդամոց կէսն Ս. Երուսաղիմայ Միաբանութեան եւ կէսն Աթանաս վարդապետի կողմէ ընտրուելով՝ ջանան միաբան գործակցութեամբ որոշում մը տալ խնդրոյն, համաձայն օրինաց միջնորդ դատաւորաց՝ այն է՝ արդիւններու, վերապահելով սակայն՝ երկուց կողմանց ՚ի հարկին Կայսերական ձեռնհաս դատարանին դիմելու իրաւունքը՝ եթէ երբեք տեղի մնայ: Հետեւապէս փափաքելի է որ Ս. Երուսաղէմէն սպասուած օրինաւոր դրութիւնը առանց աւելի յապաղման հասնին ժամ յառաջ ՚ի Պատրիարքարան:

Եօթներորդ՝ հին դատական գործերէն մէկն ալ հանդուցեալ Ունձեան պարոն Յարութիւնի կենդանութեան ատեն՝ նորա եւ նորա կողակից Մարիամ տիկնոջ միջեւ 1867ին ծագած ամուսնական խնդիրն է, զոր խմատաւորելով խեղամուտ եղաւ Տեսչութիւնս թէ՛ այս գործն նախընթաց վարչութեան օրով կրկին եւ կրկին քննուելով, նախ 1869ին որոշուէր է որ այր ու կին առժամեայ կերպիւ իրարմէ բացակայ մնան եւ պարոն Յարութիւն 1000 ոսկինոց արժէթուղթ (գօնաօլիտէ) մը տայ բողոքարկու տիկնոջ. յետոյ 1871ին վճռաքնութեամբ տրուած որոշմամբ մը 400ի զեղչուէր է այդ 1000 գօնաօլիտի վճարումը, եւ այնուհետեւ, 1876ին, Մարիամ տիկին Կայսերական կառավարութեան մատուցած աղերսագրով մը բողոքեր է այդ որոշման դէմ, որոյ համար գործն դարձեալ յանձնուէր է Պատրիարքարանին, ուր սոյն որոշումն վերահաստատուէր է. սակայն 1878ին՝ Մարիամ նորէն բողոքեր ու վերջին որոշման գրեթէ ուղղաքնութիւնը խնդրեր է, եւ այս պատճառաւ խնդրը դարձեալ Պատրիարքարանի յանձնուէր է յետոյ՝ ամուսնոյն մահը վրայ հասնելով՝ հանդուցելոյն ժառանգութենէն իւր բաժինն պահանջելու համար դիմեր է Շէյխ-Իւլ-Իսլամական Դատարանին, ուսկից 1275 այն է 1879 հոկտեմբեր 16 ամսաթիւ պաշտօնական հարցադրով մը տեղեկութիւն խնդրուէր է թէ, աղերսարկու Մարիամ տիկինն՝ միթէ մինչ ցմահ ամուսնոյն նորա կինն լինելով՝ ժառանգութեան իրաւունք ունի թէ ոչ. որու վրայ՝ Արդարասէր Սրբազնութեանդ բարձր հրամանաւ՝ նախորդ վարչութեան անդամներէն Գըլըճեան Գէորգ եւ Չօպանեան Յակոբ էֆէնդիներէ կազմեալ մասնախմբի մը յանձնուած էր գործն հաշտարար վախճան մը տալու հրահանգով:

Ուստի Տեսչութիւնս՝ տեղեկանալով որ սոյն Պատ. Մասնախմբն թէեւ խնդիրն հետախուզեր եւ սերտեր է, բայց դեռ չէ տեղեկագրեր իւր եզրակացութիւնը, փոյթ անձին կալաւ ձեպել զայն, եւ ՚ի դիմաց Մասնախմբին 1881 փետրվար 9 թուականաւ Ձեր Սրբազնութեան մատուցեալ տեղեկագրոյն եզրակացութենէն հասկցուեցաւ որ Նոյնին Մեծապատուութիւնը միանալով եւ բողոքարկու Մարիամ տիկնոջ փոխանորդող Մեծ. Նազարէթ էֆ. Շահպաղեան եւ հանդուցելոյն միւս ժառանգորդաց կողմէ Աթեան Մեծ. Միհրան էֆէնտին հրաւիրելով, ի ներկայութեան սոցա խնդիրն ՚ի քնն առնուէր եւ համուղում գոյացեր է թէ Մարիամ տիկինն հանդուցելոյն օրինաւոր ժառանգորդն է. բայց գործին հաշտարար վախճան մը տալու դիմամբ՝ առաջարկեալ դրամական վճարումը սահմանելու մասին չեն կրցեր համաձայնիլ:

Հետեւապէս Տեսչութիւնս Ամուսնական Պատ. Սենեկի նկատառման յղեց գործը 1881 յունիս ամսոյ մէջ, որպէս զի երբ Մարիամ տիկնոջ կողմէ խնդիր լինի՝ հաճի եզրակացնել եւ փութացնել գործին պատասխանը. եւ սակայն Դատարանն

Թիւրքիմացութեամբ մը՝ մասնախմբին հաւաքական եզրակացութեամբն հաստատուած ժառանգական կէտին վրայ լուծութիւն պահած եւ միայն հաշտութիւն չզոյնաւորն ծանուցած լինելուն՝ Մարիամ անկնոյն օրինաւոր աղերսանաց վրայ անօրինեց որ Ամուսնական սենեակն բարեհաճի լրացնել իւր տեղեկագիրն՝ Ազգ. դատարանին դէմ որ եւ է դանդաղանաց տեղի չթողելու համար։

Ութերորդ՝ սոյնպիսի խնդիր մ'ալ Զմիւռնացի ազգայիններէն Մեծ. Պ. Գալուստ Էքիզեանի եւ Պատրիարքարանի հին իշխով (վճռով) մը 'ի նմանէ բաժանեալ կողակից Թոթինի Զոյն անկնոյն միջեւ ծագած խնդիրն է, որով կողոսկի գիտնալ թէ իրենց Արամ անուն հարազատ որդին եւ նոյն ինքն Թոթինի՝ յիշեալ Պ. Էքիզեանի օրինաւոր ժառանգորդ կը համարուին թէ ոչ. խնդիր մը՝ ոյր նկատմամբ պատասխան մը տրուելու համար Տեսչութիւնն զիմեց վարչական Պատկառելի Խորհրդոյն որոշման, որպէս զի ըստ այնմ կարենայ անօրինել զարժանն։

Իններորդ՝ խնդիր մ'ալ դաւաճուցի ազգայնոց կը վերաբերի՝ որոց շատերն նիւթական շահու անկախութեամբ կամ ուրիշ հարկեցուցիչ պատճառաւ իրենց հայրենի երկիրն թողլով՝ հեռագնաց խումբ խումբ կը դադրեն 'ի Կ. Պօլիս կամ յայլուր, եւ ոմանք իսկ երկարատեւ պանդխտութեամբ անբարոյական կենաց եւ ցոխակեաց ընթացից հետեւելով՝ գրեթէ բոլորովին կը լքանեն եւ կը զրկեն իրենց կարօտ եւ կարեկցութեան արժանի ընտանիքն եւ անմեղ զաւակունքը, բարձր թողի ընելով անոնց օգտին եւ կրթութեան համար անհրաժեշտ եղած հոգն ու խնամքը, զորս կարելի չէ անտես առնել առանց Ֆիդիքական եւ բարոյական կրկին վնասներէ զերծ մնալու, եւ պարտաւորեալ գոլով միանգամայն իրենց քրտնաթոր վաստակոց մեծ մասն 'ի պանդխտութեան մսխել՝ չեն կրնար 'ի հայրենիս վերադառնալու համար բաւական գումար մը ձեռք բերել եւ հետեւապէս կարօտութեան եւ թշուառութեան մէջ կը հիւժեն թէ՛ զիրենք եւ թէ՛ իրենց անոք ու անխնամ ընտանիքն, յորոց ոմանց կողմէ յարուցեալ պահանջանաց վրայ հարկ կըլլար յորդորել եւ ստիպել իրենց ընտանեաց գլխաւորներն անյապաղ վերադառնալ 'ի հայրենիս. սակայն նկատելով որ այսպիսի խնդրանաց գործադրութիւնն չէ՛ օրինաց համաձայն, այս մասին նախորդ վարչութեան օրով եղած որոշման համեմատ անօրինուեցաւ որ բողոքարկու ընտանիք գիմեն Պատրիարքարանի գործակատար Քաֆաճեանի Թրէնկեան Մեծ. Աբրահամ էֆէնտին եւ զայն իրենց կողմէ օրինաւոր փոխանորդ կարգելով՝ Նորին Մեծապատուութեան հաղորդեն իրենց նիւթական կարօտութիւններն ամենայն մանրամասնութեամբ, եւ 'ի գիւրութիւն եւ կանոնաւորութիւն թէ՛ բողոքարկու ընտանեաց եւ թէ՛ Ազգային Գաւառական վարչութեան՝ Տեսչութիւնն երկու տեսակ օրինաւոր փոխանորդագիր խմբագրեց. որոց տպագիր պատճէններն Ձեր Սրբազնութեան 1881 մարտ 25 թուականաւ տպագրեալ հրահանգաց հետ յղուեցաւ դաւառ. ազգային իշխանութեանց. որպէս զի բողոքարկու ընտանեաց խնդրանաց համաձայն վերոյիշեալ տպագիր պատճէնին նման փոխանորդագրով մը փոխանորդ կարգեն զԱբրահամ էֆէնտին, որն որ 'ի հարկին վատահոլութեան արժանի եւ ձեռնհաս փաստաբան մը կարգելով՝ պաշտպանել տայ նոցա իրաւունքներն, եւ հարկադրէ թափառական պանդխտներն օրապահիկ պարէն շաբաթ վճարելու եւ խնամելու իրենց բազմաթիւ տարիներէ հետէ լքեալ ընտանիքն ու մերձաւորները։ Արդ՝ բնական է որ 'ի հայրենիս վերադարձողը կազատին պարէնի եւ դատական ծախսոց վճարումէ, նա մանաւանդ որ պարէնի փոխարէն գանձուած դրամներէն հարկերին քսանը՝ իւր վարձք փաստաբանաց տրուելու որոշում եղաւ հաւանութեամբ վարչական Խորհրդոյ։

Տասներորդ՝ մեր ազգայիններէն Պ. Յակոբ Պօլիկեան՝ Նիկիմիդիոյ բարեջան Առաջնորդ Ս. Հօրմէն կը պահանջէ 6575 դահեկան, անդ թամբը կոչուած գիւղին մէջ Կաֆաճեանի Թեմաթեան Եպիսկոպոսի հիմնուած եկեղեցւոյ շինութեան հաշուէն։

Տեսչութիւնն Ձեր Սրբազնութեան բարձր հրամանաւ երկիցս գրելով յանձնարարեց յիշեալ Գեր. Առաջնորդին հատուցանել զայն. եւ պատասխան ստացաւ թէ ոչ ինքն, ոչ եկեղեցին եւ ոչ երեսնի չափ տնեցիք կրնան վճարել այդ անհերքելի պարտքն 'ի զրկանս խնդրարկու Պօլիկեանի, որոյ թշուառ վիճակն դարձանելու պարտաւոր են յիշեալ թամբը գիւղի բնակիչք, որոց 'ի հոգեւոր միութարու-

թիւն կառուցուեր է եկեղեցին, ապա թէ ոչ Ազգին կամ ազգային եկեղեցեաց պիտի պատկանի հանգանակութեամբ հայթայթել սոյն պարտուց գումարն եւ վճարել պարտապահանքին՝ յանուն իրաւանց։

Մետասաներորդ՝ եւ վերջապէս ինչպէս որ ուրիշ առիթներով ալ պատիւ ունեցած եմ Ամեն. Սրբազնութեանդ գիտութեան ներկայել, ներկայիւս ալ կը յիշեցնեմ թէ կային եւ կան ինչ ինչ պատժական դատեր, զորս առկախ եւ տարտամ ձգելն կրնայ զանազան պարսխանաբանութեանց դուռ բանալ, եւ որոց վերջնական կարգադրութիւն մը տալու համար 1880 դեկտեմբերի մէջ ըրած առաջարկիս համեմատ ազգային ընդհանուր դատախազ մը կարգելնիս անհրաժեշտ է, որովհետեւ ազգային հանրական շահերու մէջ կրնան երբեմն այնպիսի փտանգաւոր դեղձումներ 'ի գործ դրուիլ եւ նենգութիւններ կամ խարդաւանանք մուտ գրտնել Ազգային սեպհականութեանց, ստացուածոց եւ պաշտօնատարութեանց մէջ, եւ պատահիլ նաեւ օրինաց եւ կանոնական հրահանգաց գործադրութեան մէջ այնպիսի անխտտովանելի արգելքներ կամ ազդեցութիւններ՝ որոնք երեւան ելած պահուն ինչպէս մերթ ընդ մերթ կը պատահին 'ի զրկանս այլոց, Դատական Տեսչութիւնն կրնայ 'ի համար կոչուիլ։

Արդ՝ 'ի բաց թողլով բազմաթիւ կարեւոր մանրամասնութիւններ՝ հոս կը փակեմ տեղեկագրոյս այս մասը, եւ կը յուսամ, Սրբազան Հայր, թէ պատուարժան ընթերցողքս պիտի կարեն դիւրաւ նմարել թէ ինչ պէտք է ընել դատական գործոց ընթացից բարեւր եւ արագ շարժում մը տալու համար, եւ թէ Տեսչութիւնն իւրովանն որքան ճիշդ թափած է այս մասին, որ արդէն Տեսչութեանս զիւանին մէջ զիջեալ զանազան թղթերով եւ գրութիւններով ալ կարծեմ կրնայ ապացուցուիլ։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս ինչ ինչ օրինական առաջարկութեանց, դիտողութեանց եւ սնորհմութեանց.

Սրբազան Տէր,

Համարատուութեանս այս մասին մէջ յառաջ բերելիք տեղեկութիւնք եւս զանազան առիթներով Ձեր Քաջահմուտ Սրբազնութեան գիտութեան մատուցուած լինելով՝ թէպէտ Ձեզ համար բողոքովին նոր նիւթեր չեն, այլ սակայն իրենց կարեւորութեամբն տեղեկագրութեան արժանի համարելով՝ կը փութամ զայնս 'ի ծանօթումն բերել Ազգային Պատկառելի Ժողովոյ 'ի մարթ ու պատշաճ տնօրինութիւն։

Նախ՝ նկատելով որ թաղային Հաշտարար Դատարաններէն ոմանք սկսեր են ընդունել եւ քննել այլ եւ այլ խնդիրներ եւ վէճեր, որոնք առանց Դատական Տեսչութեան գիտութեան՝ կամ ուղղակի յղուած կամ մատուցուած լինելով՝ Տեսչութեանս անմիջական հսկողութեան չընկնեն գէթ առ այժմ՝ դուրս կը մնան. եւ այսպիսի պարագայից մէջ կատարուած գործողութիւնք թէեւ անձնապէս ինձ փոյթ չէին ու չեն, բայց վարչական կազմակերպութեան նոր օրինաց տրամադրութեան համեմատ, այսպիսի դիպուածոց մէջ ինչ եղանակաւ վարուելու մասին որոշում մը տրուիլն իբրեւ կարեւոր՝ առաջարկած եմ վարչական Պատկառելի Խորհրդոյ 1881 մայիս 26 թուականաւ մատուցած գրութեամբս, եւ սակայն ցարդ որոշում մը չկրցաւ տրուիլ այս մասին։

Երկրորդ՝ խորհրդածելով որ ազգային եկեղեցական դասէն կան կամ կրնան գտնուիլ այնպիսիք, որոց դէմ յարուցուած ըլլան կամ յարուցուին այնպիսի մեղաւան կամ պատժական խնդիրներ, որոնք սոսկ կրօնի վերաբերութիւն չունին ուղ-

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս ինչ ինչ ծրագրոց.

Պերճաշնորհ Հայր.

Նախ՝ վաղածանօթ է Քաջարթուն Սրբազնութեանդ թէ՛ 1880 զեկտեմբեր Ծին Ազգային Կեդրոնական Դատարանի Սենեկաց բացման առթիւ արտասանած հակիրճ բանախօսութեամբս խոստացած էի ազգային դատավարութեան օրինաց համառօտ հաւաքածոյ մը ծրագրել, որը առաջին պրակն 1881 յունվարի մէջ մասամբ պատրաստ լինելով հանդերձ Դատական Խորհրդականիդ կամքէն ու կարողութենէն անկախ պատճառներով յամեցաւ նորա տպագրութիւնն. ուստի այդ միջոցին արտատուած ինչ ինչ օրինական ծրագրեր կցելով այնմ, պատիւ ունեցայ զայն ամբողջովին մատուցանել Ամեն. Սրբազնութեանդ, եւ իւր բարձր հրամանաւ հովտեմբեր ամսոյ մէջ մամուլ աւանդեցաւ եւ 450 օրինակ տպագրուեցաւ, որոց առաջինն իբր առաջաւոր երկասիրութեանս՝ յետ ընծայելոյ բարեխնամ Սրբազնութեանդ՝ մէյմէկ օրինակ ալ պիտի մատուցուին բոլոր Ազգային Հանտիրապատիւ Երեսփոխան Հարց եւ Տեարց ի նկատաւունս եւ ի պատշաճ տնօրինութիւն, եւ մէկ մէկ օրինակ եւս Ազգային Պատուարժան Դատարանաց պիտի յղուին իբր հրահանգ կամ ուղղեցոյց մինչ ցնոր տնօրինութիւն. իսկ մնացորդ իբր ազգային սեպհականութիւն պիտի տրուին հետաքրքիր ազգայնոց՝ արժեզինն ստանալով:

Չեռնարկիս երկրորդ պրակն ալ մեծաւ մասամբ պատրաստուած է յաղագս օրինաց ազգային վիճակագրութեան, ամուսնախօսութեան, ամուսնական խնդրոց կամ վէճից եւ ամուսնաբաժանմանց, ինչպէս նաեւ զաւակաց խնամատարութեան, ժառանգութեանց եւ կտակաց. սակայն Տեսչութեանս զիւանդին ներկայ անհախանձելի եւ անհանդուրժելի անձկութեան պատճառաւ յակամայս կը յապաղի նաեւ նորա հրատարակութիւնն, զոր Ազգային Պատկառելի Ընդհ. Ժողովոյ դիտութեան եւ ուղղութեան ներկայելնիս մեզ անտեղի չ'թուիր:

Երկրորդ՝ կարծեմ մոռցած չէք, Հայր Սրբազան, որ Ազգ. Պատրիարքարանի Դիւանատան ներքին կառավարութեան համար կանոնագրութիւն մը ծրագրելէ յետոյ 1881 յունվար ամսոյ մէջ յանձնեք էի Դիւանական Յանձնախմբին քննութեան եւ դիտողութեան, որու՝ յայնժամ որ եւ է պատճառաւ չգումարուելուն կամ գումարիլ չկարենալուն՝ անփոփոխ ետ առի զայն եւ մայիս 24ին մատուցի վարչական Պատ. Խորհրդոյ ուղղութեան ի պարտաւարտաճ տնօրինութիւն:

Երրորդ՝ վարչական Խորհրդոյ արժանաւոր Ատենապետ եւ Ներքին գործոց քաջահմուտ Խորհրդական Վսեմ. Եղուսեֆեան Տիգրան էֆէնտի ըրած խոստմանս համեմատ՝ կանոնագիր մ'ալ Խորհրդոյն ներքին կառավարութեան համար նոյն ամսոյ մէջ ծրագրելէ ետեւ՝ դարձեալ Դիւանական անձկութեան առթիւ յունիս ամսոյ մէջ կարող եղայ ի շնորհս աջակցութեան վարչական Խորհրդոյ Քարտուղար Մեծ. Բ. Թելեան էֆէնտի մատուցանել Նորին Վսեմութեան ի նկատաւունս:

Չորրորդ՝ նոյն ժամայն Նորին Վսեմութեան մատուցի նաեւ մասնաւորապէս Տեսչութեանս Դիւանին կառավարութեան համար պատրաստուած կանոնագիր մը, զոր ծրագրած էի 1880 զեկտեմբեր ամսոյ մէջ, այլ զիւանական ծանուցեալ տարտամ կացութեան պատճառաւ նորա մատուցումն եւս յապաղեցաւ մինչեւ յունիս:

Հինգերորդ՝ կը յիշէք նաեւ, Սրբազան Հայր, թէ ի Մարաշ մեր գաւառացի ազգայինք Կեդրոնական Դատարան մը հաստատել ձեռնարկելով՝ սոյն Դատարանին կազմութեան վրայ ինչ ինչ ծանօթութիւնք եւ հրահանգ խնդրած էին այն խնդրագրով՝ որ տեղւոյն Առաջնորդ բարեշնորհ Տ. Կարապետ Հօր միջոցաւ առ Ամեն. Սրբազնութիւնդ ուղղուած եւ իւր բարձր հրամանաւ առժամեայ պաշտօնավար Խորհրդականիդ յանձնարարեալ էր սեպտեմբեր 23ին:

Ըստ այսմ հրամանի՝ փութացի պատուատիրել զայն եւ Խորհրդածելով սակայն

որ այսպիսի նոր հաստատութիւն մը կրնայ ի գաւառս հակառակութեան ոգի ներշնչել այնպիսի անձանց՝ որոնք եթէ Դատարանն կազմակերպուած լինի՝ շնորհիւ Կայսերական բարեխնամ կառավարութեան 18 տարիէ ի վեր անխափան գործադրող Ազգ. Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն, չափաի կրնան համարձակիլ այնքան ազդեցութեամբ հակառակութեան ծայն կամ՝ զրգիւ բառնալ որքան կրնան յանդգնիլ ընդդիմութիւն յարուցանելու՝ եթէ Դատարանն նոր դրութեամբ երեք սենեկաց բաժնուելով առ երեւոյթս տարրեր թուի բծախնդիր հակառակորդաց, թէեւ իրօք տարբերութիւն մը չգոյանար յաջս օրինագիտաց. այս նկատումներով զիմեցի Եղուսեֆեան Վսեմ. Տիգրան էֆէնտի ազգածանօթ եւ քաջախորձ Խորհրդոյն, որ յետ կշռադատելոյ իրաց վիճակը՝ եզրակացուց թէ «արդարեւ Սահմանադրութեան տրամադրութեանց ըստ կարի համաձայն «վարուելն նախադասելի է ի մասին կազմութեան ազգային դատարանաց ի գաւառս»։ յայլուստ՝ կարծելով թէ աւելի զիւրին կրնայ ըլլալ մէջ գաւառացի ազգայնոց կազմել դատարան մը երեք դատաւորով քան երեք սենեկաց համար հնգեւտասան դատաւոր ընտրել, Տեսչութիւնս անմիջապէս պատրաստեց ծրագիր մը, որու առաջարկութեանց կարող կը գտնուի երեք Խորհրդականներէ կազմեալ դատարան մ'ունենալու, եւ շարավական եօթնեկին մի օրը մասնաւորապէս ամուսնական, մէկ օրը անհատական եւ ի հարկին օր մ'եւս վարչական գործերու յատկացնելով դատ առնելու գաղափարն, բայց զիւանական տաղնապին տեւական վիճակին առթիւ հազիւ նոյեմբեր 16ին կրցաւ մատուցանել զայն Բարձրաշնորհ Սրբազնութեանդ:

Ասոնք են աւասիկ, Սրբազան Հայր, այն զլիսաւոր ծրագրերն՝ զոր Տեսչութիւնս իւր չորեքտասնամեայ անձուկ պաշտօնաշրջանին մէջ կարող եղաւ մատուցանել ի դիւրութիւն ընթացիկ գործոց Ազգ. վարչութեան. ներեցէք ապա որ կըրճեմ աստ տեղեկագրոյս այս մասն եւս, եւ զանց սունեմ այն մանրամասնութիւններն՝ զորս համարառու Հարք եւ Տեարք ի հարկին կրնան ստանալ:

ԳԼՈՒԽ Թ.

Վերջաբան եւ նրամեհ.

Վերոգրեալ տողերէն չը հետեւի սակայն, Հայր Սրբազան, թէ Տեսչութեանս կողմէն վարչական պատկառելի Խորհրդոյն մատուցեալ առաջարկներն ու ծրագրերն առանց որոշման կամ տնօրինութեան մնացած լինելն յիշատակելով՝ նոյն Խորհրդոյ դէմ գանգատ բառնալու մտադրութիւն կամ դիտում մ'ունեցած լինիմ, եւ եթէ երբեք այդպիսի հետեւութիւն մ'ընող գտնուի, կը պատասխանեմ. վարչական Խորհրդոց վեց անդամներէն մին լինելու պատիւն ունենալով անարժանաբար՝ կրնամ հաստատել թէ վարչական Խորհուրդն՝ որ ըստ ԱՅրդ յօդուածի վարչ. կազմակերպութեան օրինաց՝ առ նուազն ամիսն երկու անգամ նիստ ընելու պարտաւոր է, ամիսը մինչեւ չորս թէ ոչ աւելի նիստեր ընելով իսկ՝ չկրցաւ հասնիլ վարչութեան ամեն սովորական գործոց տնօրինութեանց, քանզի բազմաթիւ նիստեր զոհուեցան միջանկեալ, ցաւալի եւ նորանոր ինչ ինչ խնդրոց համար, զոր պատճառեցին այլեւայլ դէպքեր եւ ի մասնաւորի Կիլիկիոյ Աթոռոյն առթիւ ծագած խնդիրներ, որոնք միւսոյ տակ ծածկուած կայծերու նման բազմաթիւ տարիներէ հետէ սնուցեալ կային ու մնային՝ ազգակործան հետեւանքներ սպառնալով. խնդրեք՝ որոց փուշերն ու կնճիռներն հարկելու, գտելու համար վարչական Խորհրդոյ այնքան կարեւոր նիստերն ու ժամերն սպառեցան առանց սակայն անտես կամ բարձի թողի ըլլալու վարչական եւ ազգային խել մը ընթացիկ գործեր:

Այս, Սրբազան Հայր, անկեղծաբար խօսելով՝ ոչ իբր պաշտպան Վարչական խորհրդոյ՝ զի կարօտ է պաշտպանութեանս, այլ իբր համերաշխ մին ՚ի վեց խորհրդականաց, կարծեմ իրաւունք ունիմ խոստովանելու որ մեր Վարչական խորհուրդն եթէ յուսմեք ստղիւտ ենթադրուելու տեղի մը կայ, այն ալ առաւել յաճախ եւ ժամապահութեամբ չգումարուիրն է, բայց կը տարակուսիմ մատնացոյց առնելու թէ վեց խորհրդականաց որն կրնար յանձն առնուլ չաբաթը մէկ անգամէն աւելի անգամներ նիստ կազմելու պարտաւորութիւնն՝ առանց ծանրագոյն ֆնտսներ եւ զոհողութիւններ կրելու, մանաւանդ զի անձնիւր խորհրդական ստիպուեցաւ խորհրդոյ գումարման որոշեալ ժամանակէն դուրս օրեր եւ ժամեր ալ զօհել կատարեալ անձնուիրութեամբ:

Արդ՝ ես իմ մասին խօսելով՝ կրնամ ապացուցանել թէ ՚ի բաց առեալ ներկայ դեկտեմբեր ամիսն՝ յորում յակամայտ նուազեցուցի երթեւեկս ՚ի Պատրիարքարան, չաբաթը առ նուազն երկիցս եւ երկուսն ՚ի Պատրիարքարան այցելեր եմ, թող զամենօրեայ աշխատութիւններս՝ որոց առթիւ ՚ի բնակարանի իմում բազմաթիւ ժամեր զոհելու հարկադրեալ եմ, ինչպէս որ արդէն Ձ. գլխոյն մէջ յիշատակեցի, Տեսչութեանս ժամանած աղերսագրերն համառօտելու, պատկանեալ տնօրինութիւններն անոնց վրայ դրոշմելու եւ միանգամայն այս ամիսն կարգահամարաւ նշանակելու նաեւ ՚ի մի մասնաւոր տետր՝ զոր առ ՚ի չգոյէ օժանդակի մ'իմ ձեռք կը բռնեմ ՚ի դիւրութիւն եւ ՚ի ճշգրտութիւն գործոց:

Թող նաեւ գիշերային ժամերն՝ զոր ՚ի սէր ազգիս բայց միշտ ՚ի ֆնտս անձնական գործոցս՝ զոհեր եմ եւ կը զոհեմ օրինաց հաւաքածոյնն զանազան տրամադրութեանց պատրաստութեան, թարգմանութեան եւ խմբագրութեան առթիւ, այլ այս զոհողութեանց վերջին սահմանին արդէն հասած լինելովս՝ վերջնական հրաժեշտիս ժամն ալ զոյգ ընդ նմին հասած է:

Այս գրոյցէն մի գուցէ ըմբռնուի թէ Վարչական գործոց դժուարութեանց առջեւ ընկրկելով՝ ձեռնթափ եղած լինիմ վճատեալ, ոչ, Ամենազէտ Սրբազան Հայր, ոչ, արդէն Ձեր գործադրութիւն Սրբազնութենէ չեմ գաղտնապահած թէ մինչեւ որ աստիճան անձնուիրութեամբ կը փափաքիմ խմբական զոհել կենացս վերջին օրերն ՚ի ծառայութիւն սիրելի Ազգիս:

Ձեր Բարձր. Սրբազնութիւնն կրնայ վկայել թէ որքան սիրով պիտի շարունակէի պաշտօնս եթէ իրադրութեամբ լինէին այն յոյսերն՝ զոր ունէի ազգային դատական գործոց խորհրդականութեան պաշտօնին կոչուած օրս. բայց ներսի ինձ ըսել թէ դժբաղդաբար չիրականացան այն քաղցրիկ յոյսերն՝ որով կուզէի եւս առաւել արդիւնաւորել ստանձնած պաշտօնս յօգուտ ազգային շահուց եւ չկրցայ կարգադրել անձնական գործերս՝ որոնք ընտանեացս իրաւանց յարակցեալ՝ վերստին ՚ի գործ եւ յաշխատութիւն կը կոչեն զիս:

Գէթ յատուկ աջակից կամ օժանդակ մ'ունենայի՝ ինչպէս ունեցաւ մեր Տնտեսական գործոց խորհրդական Մեծ. Մելիքեան էֆէնտին, — որու հրաժեշտն ՚ի վեր Ազգ. Տնտեսական գործերն բոլորովին տարտամ կացութեան չմտնուեցան բարեբաղդաբար ՚ի շնորհս Պէրխուտար Մեծ. Յակոբ էֆէնտիի, որ արժանապէս կը կատարէ Տնտեսական գործոց տեսչութիւնն ու հսկողութիւնը —, կարելի էր յայնժամ առ ժամանակ մի եւս շարունակէի պաշտօնս, բայց միւս կողմէ կեղծոնական արկեղ ներկայ տարապայման վիճակն չէր ներեր մեզ այդպիսի արժանաւոր եւ ձեռնհաս աջակից մը գտնել, եւ թէպէտ Տեսչութեանս Ընդհ. Բարտուղար Մեծ. Կարապետ էֆէնտին իւր բազմամեայ փորձառութեամբ, շրջակայեաց եւ զգոն գործառնութեամբն կրնայ այս կարեւոր պաշտօնն վարել, սակայն Վարչութեան միւս ձիւղերն չեն կրնար զուրկ մնալ եւ չօգտիլ նորա ծառայութենէն:

Պարտ կը համարիմ աստ յանուն արդարութեան յիշել թէ արդարեւ Վարչական խորհրդոյ Բարտուղար թեւեան Մեծ. Բարթող էֆէնտի ալ խոստացաւ Հայերէն խմբագրութեանց ըստ կարի օժանդակել, բայց գիւնական այլ եւ այլ գործերէ բռնաւորեալ լինելուն՝ ժամանակ չունեցաւ, եւ կը յիշեք, Սրբազան Հայր, որ զգալով դիւանական այս տարտամ կացութիւնն յաւանքեաց գիտել տալ Վարչական խորհրդոյ թէ՛ առանց դրամի անհնար է Ազգին օրինաւոր պի-

տոյից դիմակալել, ազգային ակնկալութիւններն գոհացնել եւ Վարչական մեքենայն ըստ օրինի վարել, ուստի եւ խնդրեցի որ Վարչական խորհուրդն փոյթ տանի կարելի եղածին չափ ճոխացնել կեղծոնական Սնտուկի հասոյթներն եւ նորա վիճակն վերածել այնպիսի դրից, որով կարելի լինի մուտքն ելից համապատասխանել եւ ազգային հասոյթներն դիմաւորել ծախքերն, առանց որոյ ծանր էր ինձ ճանարտութեան մ'արձագանք լինիլ թէ առանց դրամական բարեօրման չպիտի յաջողի Ազգ. Վարչական կազմակերպութեան դրութիւնը՝ որ խոհեմութեամբ քուէարկեալ ամենագովելի դրութիւն մ'է եւ որու շնորհիւ Վարչութեան մէն մի ձիւղին պատկանեալ գործերն բոլորովին չմտնուեցան ներկայ տխուր կացութեան՝ չըսեմ անխիստանութեան, որ յառաջ եկած է աշխարհագովեալ Սրբազնութեանդ ազգ-գովին անընդունելի հրաժարականէն. եւ միանգամայն ծանուցի թէ լաւագոյն եւ նախամեծար կը թուէր ինձ այդ դժբաղդ օրն չտեսած հեռանալ պաշտօնէս, եւ առ այս՝ առաւել քան զամենայն Վարչական Պատկառելի խորհրդոյն իմաստուն կատարեցի նաեւ այս պարտականութիւնս. եւ սակայն իրաց ՚ի վեր անդր յիշադրեալ ընթացից հետ միանգամայն հրաժեշտի շարժառիթներն ալ շարունակութեան մէջ լինելով՝ երկիցս ու երկուսն Ձերդ Ամեն. Սրբազնութենէն, որ բարեհաճի յաջորդս ժամ յառաջ ընտրելու շնորհն ընել. եւ մինչդեռ վերջին անգամ ստացած պատասխանիս վրայ կապաւելի այն ժամուն՝ յորում ամենքս միաբան եւ միահամուռ պիտի քաջուէինք մեր պաշտօններէն, յանկարծ Սրբազնութիւնդ իւր վշտառիթ հրաժեշտը կանխելով՝ պարտաւորեց անձնիւր խորհրդական մնալ իւր պաշտաման մէջ ՚ի հսկողութիւն Վարչական գործոց:

Արդ՝ մէկ կողմէ նկատելով որ Տնտեսական գործոց խորհրդական Մեծ. Մելիքեան էֆէնտին՝ կարծեմ իւր անձնական զբաղմանց պատճառաւ՝ հրաժարեցաւ իւր պաշտօնէն, ինչպէս արդէն ըսինք աջակից ունենալով Մեծ. Յակոբ Պէրխուտար էֆէնտին, եւ ՚ի ձեռս նորա թողուց Տեսչութեան հոգը՝ զոր տանի Պէրխուտար էֆէնտի ՚ի գոհութիւն Վարչութեան,

Միւս կողմէ նկատելով որ Յարաբերական գործոց խորհրդական Մոմձեան Մեծ. Միքայէլ էֆէնտին՝ կարծեմ նոյնպէս անձնական զբաղմանց պատճառաւ՝ դուռնուրեք կը պատուէ Վարչական խորհուրդն իւր ներկայութեամբ, եւ սակայն բարեբաղդաբար եռուսուֆեանս վսեմ. Տիրբան էֆէնտի իւր կրկին պաշտօնին հետ յանձն առնելով նաեւ այս պաշտօնն՝ նորա բացակայութիւնն զգալի ընել չտար,

Յայլուտ նկատելով որ կրթական գործոց խորհրդական Մեծ. Մամիկոնեան էֆէնտին կարող եղեր է իւր տեսչութեան գործոց տալ այնպիսի ուղղութիւն կամ դիրք մը՝ որով կը բաւականանայ.

Իսկ նուաստիս գալով՝ որովհետեւ անհնար է ինձ այլ եւս ձգնիլ եւ տոկալ ներկայ անհանդուրժելի վիճակին մէջ առանց բարեօրեւելու Ազգ. Դատարանաց վիճակը, եւ առանց վտանգելու անձնական գործերս եւ ընտանեացս իրաւունքը, կը փութամ վերստին ժտել Ազգանուէր Սրբազնութենէդ որ իւր արդարասիրական եւ գործավար զգացմամբ առաջի աջաց ունելով հրաժեշտիս շարժառիթներն, շնորհ ընէ այնպապաղ տնօրինել մարթն ու պատշաճն, որպէս զի Տեսչութեանս գործերն իսպառ անխնամ եւ զուրկ չմնան պէտք եղած հսկողութենէն:

՚ի վերջ բան՝ զարգացում, բարօրութիւն եւ յառաջդիմութիւն մաղթելով վասն Ազգիս եւ նորա անձնիւր անհատից, ինչպէս նաեւ կայսերական մեծագովթ Տէրութեան՝ որոյ օգտին եւ բարգաւաճման վերայ կը կայանան մեր Ազգին յառաջդիմական յոյսերն, Դստնարհիմ ՚ի համբոյր Ազգասիրեցեալ Սրբազնութեանդ օրհնեալ եւ օրհնառաք Աջոյն եւ մնամ ամենախորին ակնածանօք

Ի Կ. պոլիս-Բերա
31 դեկտեմբեր 1881

Ձերդ Վեհ. Սրբազնութեան Խոնարհագոյն Մատայ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՅՈՑ ԿԱՐԵՈՑ

Եւ Ազգ. Վարչական խորհրդոյ Դատական Գործոց

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



Handwritten signature and date.

14729

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0047882

